Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 32 (2042) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2, 2023
VOLUME 43, NO. 32 (2042) SATURDAY SEPTEMBER 2, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Երեւանի Մօտալուտ Ընտրութիւնները

Սեպտեմբեր 17-ին, տեղի պիտի ունենան Երեւանի քաղաքապետական ընտրութիւնները: Համամասնական եղանակով կայանալիք ընտրութիւններուն մասնակցութեան դիմում ներկայացուցած են 13 կուսակցութիւններ եւ մէկ դաշինք, որոնք կը ձգտին տեղ գրաւելու Երեւան քաղաքի աւագանիէն ներս, որ իր կարգին պիտի ընտրէ Հայոց մայրաքաղաքի յաջորդ քաղաքապետը:

Մասնակցող կուսակցութիւններու շարքին չկան նախորդ ռեժիմի ներկայացուցիչները, որոնք նախընտրած են ասպարէզ դուրս չգալ, նկատի առնելով որ, վերջին տարիներուն անոնց վարկանիշը կը գտնուի հոն, ուր էր թաւշեայ յեղափոխութենէն առաջ եւ յետոյ: Նախկին փտած վարչակազմին մաս կազմած ուժերը եւ կուսակցութիւնները կը շարունակեն մնալ մերժուած՝ հասարակութեան լայն խաւերուն կողմէ: Այդ ցոյց կու տան վստահելի հարցախոյզներու արդիւնքները եւ ընդդիմութեան հրաւիրած հանրահաւաքներուն ժողովուրդի սակաւաթիւ մասնակցութիւնը:

Ընտրութիւններուն մասնակցող ուժերուն մէջ, իշխող՝ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութիւնը կը գտնուի առաջատար դիրքի վրայ, շնորհիւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ունեցած ժողովրդականութեան, որ թէեւ նուազած է, սակայն ան կը շարունակէ մնալ Հայաստանի ամենէն բարձր վարկանիշ ունեցող քաղաքական գործիչը: Մինչեւ օրս Փաշինեան չէ մասնակցած ընտրարշաւին, սակայն յառաջիկայ օրերուն կրնայ ինք եւս բաժին ունենալ քարոզարշաւին մէջ՝ բարելաւելու համար իր գլխաւորած կուսակցութեան դիրքերը:

Առաջին անգամ ըլլալով նման խոշոր ընտրութիւններու կը մասնակցի մեծահարուստ Ռուբէն Վարդանեանի հովանաւորութիւնը վայելող՝ Ապրելու Երկիր կուսակցութիւնը, որ կը գլխաւորուի Հայաստանի եւ Արցախի մէջ նախարարական պաշտօններ վարած Մանէ Թանդիլեանը: Այս կուսակցութիւնը իր ֆինանսական միջոցներուն շնորհիւ, առիթ ունի բաւական բարձր դիրք գրաւելու: Սակայն, Ռուբէն Վարդանեանի ունեցած բացասական դերակատարութիւնը Արցախի քաղաքական դաշտին վրայ կրնան ազդել կուսակցութեան քուէներուն վրայ:

Ընտրութեան կը մասնակցի նաեւ յեղափոխութենէն ետք Երե-

Շար.ը էջ 6

Այլեւս Դիւանագիտութեան Ժամանակը Չէ, Ֆրանսան Պէտք է Պահպանէ Ճնշումը Մարդասիրական Հասանելիութեան Առումով. Էմանուէլ Մաքրոն

«Լը Փուէն» թերթին տրուած հարցազրոյցս մը ընթացքին Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն ըսած է որ, այլեւս դիւանագիտութեան ժամանակը չէ: Ֆրանսան պէտք է պահպանէ ճնշումը մարդասիրական հասանելիութեան առումով:

Խօսելով Արցախի գրեթէ ինը ամիսէ շարունակուող շրջափակումի մասին, Ֆրանսայի նախագահը ըսած է որ, կը շարունակեն օգտակար նախաձեռնութիւններով հանդէս գալ, որպէսզի կենսական անհրաժեշտութեան ապրանքներ, դեղամիջոցներ ուղարկուին ու ազատ մուտք ապահովեն դէպի Լեռնային Ղարաբաղ:

Էմանուէլ Մաքրոնը սակայն, ձեռնպահ մնացած է Արցախի մէջ այսօրուան իրավիճակին վերաբերեալ միջազգային փորձագէտներու կողմէ օգտագործուող «ցեղասպանութիւն» եզրը գործածել:

«Մենք միշտ ըսած ենք, որ կողմ ենք ժողովուրդներու ինքնիշխանութեան: Լեռնային Ղարաբաղի հարցը բարդ է, այդ շարքին՝ ժողովուրդներու հաւասարութեան առումով: Ես չեմ կրնար հետեւիլ այս հարցով կոշտ գիծի կողմնակիցներուն: Այսօր մենք կ'ընենք ամէն ինչ, որպէսզի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տեւական խաղաղութիւն հաստատուի, եւ ժողովուրդներու եւ մշակոյթներու ապահովութիւն գտնուի: Այդ խաղաղութեան պայմանագիրը անհրաժեշտութիւն է, բայց այն պէտք է համահունչ ըլլայ միջազգային իրաւունքին», ըսած է նախագահ Մաքրոնը:

«Մենք պիտի պահանջենք լիարժէքօրէն պահպանել Լաչինի մարդասիրական միջանցքին կենսա-

Շար.ը էջ 6

Նախագահ Էմանուէլ Մաքրոն վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումի մը ընթացքին

Պաշտօնական Ճաշկերոյթի Մը Ընթացքին Նշուեցաւ ՀԿԲՄ-ի Կրթանպաստներու Յանձնախումբի 5-Ամեակը

ՀԿԲՄ-ի վարչութեան անդամները 5-ամեակի կարկանդակը հատելու ընթացքին

Կիրակի, Օգոստոս 27-ին, Պըրպէնքի «De Luxe» սրահէն ներս տեղի ունեցաւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան՝ ՀԿԲՄ-ի Կրթանպաստներու Յանձնախումբի հիմնադրութեան 5-ամեակին նուիրուած պաշտօնական ճաշկերոյթը, որուն ընթացքին նաեւ կատարուեցաւ այս տարուայ կրթանպաստներուն արժանացած ուսանողներու մրցանակաբաշխութիւնը: Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսի ներկայացուցիչ՝ Նազելի Համբարձումեանը, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան եւ Վարիչ Մարմինի անդամներ ու Կազմակերպութեան բարեկամներ եւ համակիրներ:

Երեկոյի հանդիսավար Ստեփան Յովակիմեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ ՀԿԲՄ-ի առաքելութեան եւ Հայ ուսանողներուն սատար կանգնելու կարեւորութեան, որպէսզի անոնք արժանանան բարձր տիտղոսներու, ապագային մաս կազմելով նաեւ մեր ազգային կեանքին՝ տարբեր բնագաւառներէ ներս:

Ապա, հանդիսավարը բեմ հրա-

Շար.ը էջ 14

Standard & Poor's-ը Բարձրացուցած է Հայաստանի Վարկանիշը

Աշխարհի ամենահեղինակաւոր տնտեսական վերլուծական կառոյցներէն մէկը՝ Standard & Poor's գործակալութիւնը բարձրացուցած է Հայաստանի երկարաժամկէտ վարկանիշը՝ թէ՛ ազգային տարադրամով, թէ՛ արտարժոյթով՝ «B+»-էն դարձնելով այն «BB-»:

Գործակալութեան պնդմամբ, Հայաստանի տնտեսութեան զարգացման կանխատեսումները կայուն բնոյթ կը կրեն:

«Հայաստանի մէջ ՀՆԱ-ի աճը ինչպէս նաեւ ֆինանսական եւ արտաքին տնտեսական ցուցանիշերը կը բարելաւուէին դեռ մինչեւ ռուս-ուքրանական հակամարտութիւնը: Կը կարծենք, որ ՀՆԱ-ի իրական աճը յաջորդ տարիներուն եւս համեմատաբար բարձր պիտի ըլլայ», նշուած է Standard & Poor's-ի հրապարակած զեկոյցին մէջ:

Գործակալութեան պնդմամբ, 2023 թուականին Հայաստանի մէջ տնտեսական աճը կնայ կազմել 7,5 տոկոս:

«Եթէ ծայրայեղ սենարները, ըսենք՝ Ատրպէյճանի հետ ուղիղ ռազմական հակամարտութիւնը բացառուին, ապա Հայաստանի մէջ տնտեսական աճին հեռանկարները հաստատուն բնոյթ պիտի կրեն», կը պնդեն Standard & Poor's-ի փորձագէտները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Ներքաղաքական Անկայունութիւն եւ Երեք Մօտեցումների Բախում Արցախում

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Արցախում օրէցօր ահագնացող հումանիտար աղէտի ֆոնին խորանում է նաեւ ներքաղաքական ճգնաժամը: Բուռն կուլիսային գործընթացները, որոնք տեսանելի չէին լայն հանրութեանը, վերջին օրերի ընթացքում սկսեցին հրապարակային դրսեւորումներ ստանալ:

Այսպէս, Արցախի Հանրապետութեան նախկին պետնախարար Ռուբէն Վարդանեանը Օգոստոսի 19-ին իր ֆէյսպուքեան էջում տեսանիւթ հրապարակեց, որում մի շարք մեղադրանքներ հնչեցրեց նախագահ Արայիկ Յարութիւնեանի հասցէին:

Վարդանեանը յայտարարեց, որ Յարութիւնեանը օրեր առաջ մի խումբ մարդկանց ներկայութեամբ խոստացել էր հրաժարական տալ նախագահի պաշտօնից, սակայն չկատարեց իր խոստումը: Վարդանեանի տեսաուղերձից օրեր առաջ Յարութիւնեանի հնարաւոր հրաժարականի մասին գրել էր հայկական տելեգրամ ալիքներից մէկը: Այդ գրառումը ակտիւօրէն տարածուել էր նաեւ ատրպէյճանական մամուլում:

Ռուբէն Վարդանեանի այս տեսաուղերձը վերջին շրջանում Արցախում տեղի ունեցող բուռն ներքաղաքական զարգացումների հետեւանքն է: Վարդանեանը պետնախարարի պաշտօնից ազատուելուց յետոյ ակտիւ քաղաքական գործունէութիւն էր ծաւալում Արցախում: Վերջին ամիսների ընթացքում նրան յաջողուել էր մէկ բեւեռում համախմբել Արցախի նախկին նախագահներին, նրանց ազդեցութեան տակ գտնուող նախկին բարձրաստիճան ուժայիններին, ինչպէս նաեւ Ազգային ժողովի երեք ընդդիմադիր խմբակցութիւններին:

Այս լայն կոնսոլիդացիայի շնորհիւ տուեալ բեւեռը դարձել է Արցախի ներքաղաքական կեանքի հիմնական դերակատարներից մէկը: Միւս կարեւոր բեւեռը Սամուէլ Բաբայեանի թիմն է՝ երկրորդ խորհրդարանական խմբակցութիւնը:

Այս ճամբարները վերջին ամիսների ընթացքում ակտիւօրէն պայքարում էին իշխանութեան համար: Մայիսին այս երկու ներքաղաքական բեւեռները նոյնիսկ փողոցային ակտիւութիւն էին ցուցաբերում՝ կազմակերպելով գրեթէ միաժամանակեայ հանրահաւաքներ, որոնք, սակայն, որեւէ էական քաղաքական դիվիդենդներ չտուեցին նրանց:

Արայիկ Յարութիւնեանը, որի իշխանութիւնը պատերազմի աւարտից յետոյ բաւականին երերուն է, ստիպուած է մանեւրել այս ուժերի միջեւ՝ երբեմն գնալով զիջումների, երբեմն էլ փորձելով ուժ ցուցադրել:

Ուժի ցուցադրման դրուագներից մէկը, որի մասին ակնարկեց նաեւ Ռուբէն Վարդանեանը իր տեսաուղերձում, տեղի ունեցաւ նախորդ շաբաթուայ ընթացքում: Օգոստոսի 17-ին մի շարք աշխարհազօրայիններ, որոնք, ըստ տարբեր աղբիւրների, ուղղորդւում էին Արայիկ Յարութիւնեանի մերձաւորների կողմից, մտել էին Ազգային ժողովի շէնք՝ նպատակ ունենալով իրենց խնդիրները ներկայացնել ԱԺ պատգամաւորներին ու ԱԺ նորընտիր նախագահ Դաւիթ Իշխանեանին: Այդ հանդիպումը, կարծես թէ, տեղի չի ունեցել: Փոխարէնը, տուեալ միջադէպից յետոյ աշխարհազօրայինների այդ խմբի հետ հանդիպում է ունեցել Արայիկ Յարութիւնեանը:

Սա, ամենայն հաւանականութեամբ, Յարութիւնեանի կողմից նախօրոք պլանաւորուած քայլ էր, որը նպատակ էր հետապնդում հեղինակազրկել Ազգային ժողովը, որը Ռուբէն Վարդանեանի ճամբարի ջանքերով քաղաքականապէս ակտիւացել է վերջին շրջանում, ինչպէս նաեւ ցոյց տալ բոլոր դերակատարներին, որ նա դեռեւս որոշակի լծակներ ու աջակցութիւն ունի: Այս քայլի միջոցով Յարութիւնեանը հաւանաբար փորձ է կատարել նաեւ երկրորդ պլան մղել իր հրաժարականի օրակարգը:

Սամուէլ Բաբայեանը եւ իր թիմը, ինչպէս յայտնի է, կողմնակից են Ատրպէյճանի հետ ուղիղ, չմիջնորդաւորուած երկխօսութեանը, բոլոր ճանապարհների բացմանը եւ առեւտրատնտեսական կապերի հաստատմանը (այլ հարց է, թէ ինչպէս է Պաքուն տեսնում այդ գործընթացները):

Արայիկ Յարութիւնեանը եւ իր կառավարութիւնը կողմ է Պաքուի հետ միջնորդաւորուած բանակցութիւններին՝ ոչ Ատրպէյճանի տարածքում: Արցախի իշխանութիւնները մօտ ապագայում, ամենայն հաւանականութեամբ, ստիպուած են լինելու ընդունել հումանիտար ճգնաժամի հանգուցալուծման տարբերակ, որը ներառելու է նաեւ Աղդամի ճանապարհի գործարկումը:

Հաւանական է, որ այդ ճանապարհով միջազգային կազմակերպութիւնների կողմից ոչ ատրպէյճանական ծագման հումանիտար բեռներ են մատակարարվելու Լեռնային Ղարաբաղ, Լաչինի միջանցքով եւս որոշակի փոխադրումներ են իրականացուելու:

Ինչպէս ցոյց տուեց Օգոստոսի 16-ին տեղի ունեցած քննարկումը ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում, բոլոր հիմնական դերակատարները այս մօտեցման կողմնակից են եւ Ստեփանակերտի համար դժուար է լինելու հրաժարուել այս տարբերակից ու ակնկալել յաւելեալ ճնշումներ Պաքուի նկատմամբ: Այս առաջարկի ընդունումը կարող է ներքաղաքական սրացման հերթական պատճառը դառնալ:

Ռուբէն Վարդանեանի եւ իր բեւեռի կարծիքը Պաքու-Ստեփանակերտ բանակցութիւնների վերաբերեալ, կարծես թէ, այն է, որ դրանք պէտք է տեղի ունենան միջազգային ձեւաչափով: Սակայն հումանիտար ճգնաժամից ելքեր գտնելու հարցում յստակ լուծումների մասին չի խօսւում: Կան բազմաթիւ յայտարարութիւններ պայքարի անհրաժեշտութեան մասին, բայց չկայ խօսք ոչ այդ պայքարի ճանապարհային քարտէզի, ոչ էլ այն մեխանիզմների ու ռեսուրսների մասին, որոնց միջոցով պէտք է իրականացուի պայքարը:

Մօտակայ շաբաթների ընթացքում այս երեք հիմնական դերակատարների միջեւ ուժերի յարաբերակցութիւնից է կախուած լինելու, թէ որ մօտեցումներն են գերիշխող դառնալու Արցախում: Խորացող հումանիտար ճգնաժամի ֆոնին քաղաքական զարգացումները եւս կարող են անկանխատեսելի ընթացք ստանալ:

«ՍԻՎԻԼՆԵԹ»

Հայաստանը Բարդ Հանգոյցում

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Խաղաղութիւնը անկախութեան ճանապարհն է, իսկ պատերազմը՝ ԽՍՀՄ ճանապարհը բաց պահողը: Այդ մտքի հեղինակը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն է, իսկ միտքը հնչեցրել է Հայաստանի Անկախութեան հուշակագրի տարեդարձի օրը, երբ արձանագրել էր նաեւ, որ հուշակագիրն էլ պարունակում է հակամարտութեան խօսոյթի տրամաբանութիւն եւ ըստ այդմ բաց է պահում ոչ թէ անկախութեան, այլ ԽՍՀՄ ճանապարհը: Նիկոլ Փաշինեանը խօսում է առաւելագոյնս պարզ, որովհետեւ նրա այդ ձեւակերպումներում միայն կոյրը չի նկատի հետեւեալ տրամաբանութիւնը. քանի դեռ Հայաստանը հակամարտութեան մէջ է Ատրպէյճանի հետ, կարգաւորուած չէ Թուրքիայի հետ յարաբերութիւնը, այդ հանգամանքը միշտ խաղարկելու է Ռուսաստանը, որպէսզի Հայաստանին պահի իր ազդեցութեան գօտում: Սա բաւականին պարզ «սխեմա» է, եւ այդ «սխեման» արձանագրուած է վաղուց, տարբեր գործիչներ այդ սխեման արձանագրել են նոյնիսկ Նիկոլ Փաշինեանի արձանագրումներից, անգամ նրա վարչապետութիւնից շատ առաջ:

Գլխաւոր հարցն այն է, թէ ինչպէս դուրս գալ այդ սխեմայից, ո՞րն է պատերազմի եւ որը՝ խաղաղութեան ճանապարհը: Սա է քննութեան կարեւորագոյն հարցը, այլ ոչ թէ Անկախութեան հուշակագիրը, որը գործնականում ազդարարում է ընդամէնը հայկական պետականութեան եւ ինքնութեան կարեւորագոյն ելակէտերը, որոնք զիջելով կամ որոնք »խորը քննութեան« ենթարկելով կը ստանանք ոչ թէ խաղաղութիւն, այլ գործնականում մի իրավիճակ, երբ Հայաստանին հնարաւոր է պատերազմի շանտաժով ստիպել »քննութեան« ենթարկել սեփական ինքնութիւնը եւ պետականութեան վերականգնման կարեւոր ելակէտերը:

Եթէ Հայաստանը պետական մակարդակով դիտարկում է այն տրամաբանութիւնը, որ Թուրքիայի եւ Ատրպէյճանի հետ խաղաղութեամբ ապահովելու է անկախութիւնը Ռուսաստանից, ապա ակնառու է, որ Ռուսաստանն էլ առաւել ինտենսիւ դիտարկելու է հայ-ատրպէյճանական եւ հայ-թուրքական հակամարտութիւնների խթանումը, եթէ իհարկէ չունի Կովկասից հեռանալու նպատակ: Ռուսաստանն ունի՞ հեռանալու նպատակ, թէ ոչ, սա առանձին քննութեան հարց է: Բայց, քննութեան հարց է, թէ արդեօ՞ք Ռուսաստանի հեռանալը տեղի չի ունենալու հենց պատերազմի միջոցով, կամ՝ հեռանալուց առաջ Ռուսաստանն ինքը կրակի չի տալու այն ռեգիոնը, որը համարում էր իր ազդեցութեան կենսական գօտին, որպէսզի ռեգիոնը »արդիւնաւէտ« գօտի չդառնայ որեւէ մէկի համար: Սրանք հարցեր են, որոնք առնուազն չունեն միարժէք պատասխան, հետեւաբար այդ պարագայում միարժէք խօսել այն մասին, թէ՝ խաղաղութիւնը անկախութեան, իսկ պատերազմը՝ ԽՍՀՄ ճանապարհն է, թերեւս այդքան էլ ռացիոնալ չէ, մեղմ ասած: Եթէ իհարկէ այստեղ նպատակը հենց ռացիոնալ խօսակցութեան ծաւալումն է, այլ ոչ թէ իռացիոնալ էպատաժային արձագանքների վրայ քաղաքական խաղի կառուցումը, որոնք յետագայում հնարաւոր է զուտ իշխանութեան պահպանման քաղաքական խնդրի սպասարկման խաղաքարտ դարձնել արտաքին տիրոյթում:

Հայաստանն անշուշտ պէտք է կարողանայ գտնել իր հարեւանների հետ փոխյարաբերութեան եւ խաղաղութեան հաւասարակշռուած բանաձեւը, բայց դրա փնտռտուքը չի կարող մեղմ ասած արդիւնաւէտ լինել, եթէ կառուցուի աշխարհաքաղաքական շահերի հակադրութեան վրայ, այն էլ պաշտօնական մակարդակով: Առաւել եւս, որ այդ բանաձեւի փնտռտուքը չի կարող կախուած լինել միայն Հայաստանից եւ Հայաստանի քայլերն ու պատրաստակամութիւնը չեն կարող բաւարար լինել այդ խնդիրները լուծելու համար: Հետեւաբար առաջանում է նաեւ հարց, թէ այդ պարագայում, այդօրինակ շեշտադրումներն ու բարձրաձայնումները որքանով են ի վիճակի բարձրացնել Հայաստանի ճկունութիւնը այն բարդ հանգոյցում, որի անունն է Կովկաս:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Տարուան Առաջին Կիսամեակին Աճած է 10,4 Տոկոսով



Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2023 թուականի Յունուար-Յուլիսին 10,4 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ: Այս մասին կը փաստեն ՀՀ Վիճակագրական Կոմիտէի հրապարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքին ծաւալը այս տարուան Յունուար-Յուլիսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 0,5 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը 2023-ի Յունուար-Յուլիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 17,2 տոկոսով:

Առեւտուրի շրջանառութեան մէջ 2023-ի առաջին 7 ամսուան մէջ 2022-ի նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելացումը կազմած է 23 տոկոս:

Հայաստանի մէջ այս տարուան Յունուար-Յուլիսին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցած է 14,9 տոկոսով:

2023 թուականի Յունուար-Յուլիսին սպառողական գիներու ցուցակը 2022-ի Յունուար-Յուլիսին համեմատ աճած է 3,6 տոկոսով, իսկ արդիւնաբերական արտադրանքի գիներուն ցուցակը մնացած է նոյնը:

Էլեկտրականութեան արտադրութեան ծաւալը Յունուար-Յուլիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ նուազած է 3,5 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ այս տարուան առաջին 7 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արձանագրուած է 62,6 տոկոս աճ: Ընդ որում՝ 2023 թուականի Յունուար-Յուլիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արտահանումը աճած է 62,1 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 63 տոկոսով:

Դրամին փոխարժէքը ԱՄՆ տոլարին նկատմամբ Յունուար-Յուլիս ամիսներուն կազմած է:

Կանանց Գումարտակի Համալրման Գործընթացը Կը Շարունակուի

Հայկական Բանակի Կանանց Գումարտակի զինուորներ

Պաշտպանութեան Նախարարութեան նախաձեռնութեամբ կեանքի կոչուած է 18-27 տարեկան իգական սեռի ներկայացուցիչներու կամաւոր հիմունքներով պարտադիր ժամկէտային զինուորական ծառայութեան ծրագիրը:

Ծառայութեան ժամկէտը 6 ամիս է, որուն ընթացքին ծրագրի մասնակիցները կը ծառայեն բացառապէս ուսումնական զօրամասին մէջ:

Վեցամսեայ ժամկէտը լրանալու կամ մինչեւ լրանալը առողջական վիճակի պատճառով վաղաժամկէտ զօրացրուելու պարագային մասնակիցները պիտի ստանան պատուովճար, 6 ամիսը լրիւ ծառայելու պարագային՝ 1 միլիոն դրամ, իսկ վաղաժամկէտ զօրացրուելու պարագային՝ նշուած գումարը վեց ամսուայ բաժնելու եւ փաստացի ծառայած ամիսներուն թիւով բազմապատկելու արդիւնքով ստացուած չափով:

6-ամսեայ ժամկէտը լրանալէ յետոյ մասնակիցները կրնան ծառայութիւնը շարունակել «Պաշտպան Հայրենեաց» ծրագրով եւ անցնիլ 5 տարի ժամկէտով պայմանագրային զինուորական ծառայութեան՝ այդ պարագային, բնականաբար, օգտուելով «Պաշտպան Հայրենեաց» ծրագրի բոլոր արտօնութիւններէն:

Այս Տարուան Առաջին Կիսամեակին Հայաստանի Մէջ Մօտ 300 Իրանեան Ընկերութիւն Բացուած է. Քերոբեան

Հայաստանի եւ Իրանի երկկողմ առեւտրաշրջանառութիւնը աշխուժացնելու նպատակով Իրանի 7 ազատ առեւտուրի գօտիներու 60 իրանեան եւ 50 հայկական ընկերութիւններ արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան եւ զբօսաշրջութեան ուղղութիւններով իրենց արտադրանքները կը ներկայացնեն եւրեայ ցուցահանդէսի շրջանակներուն մէջ, որ բացուած է Երեւանի մէջ:

Ցուցահանդէսին առանձին տաղաւարներով ներկայացուած են զբօսաշրջութեան, թեթեւ արդիւնաբերութեան, սնունդի արդիւնաբերութեան, մեքենաշինութեան եւ հիւսուածեղէնի ոլորտներու ընկերութիւնները:

ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան նշեց, որ ցուցահանդէսին միջոցով հնարաւոր պիտի ըլլայ նորովի բացայայտել Իրանի հնարաւորութիւնները հայ ներդրողներու համար եւ Հայաստանի հնարաւորութիւնները՝ իրանցիներու համար:

«Զնայած նախորդ երկու տարում Հայաստանի եւ Իրանի միջեւ առեւտրաշրջանառութիւնը կրկնապատկուել է, սակայն աճի կշռոյթը դանդաղում է, եւ պէտք է գտնել նոր հնարաւորութիւններ՝ երկկողմ շրջանառութիւնը հասցնելու այն թիրախներին, որը նախանշուել է երկու երկրների ղեկավարների կողմից, այն է՝ 3 միլիառ տոլարի: Հիմա մօտ 800 միլիոն տոլար կշռոյթի վրայ ենք գտնուում, որը շատ աւելի քիչ է, քան նախանշել են երկրների ղեկավարները: Մենք տեսնում ենք, որ ազատ առեւտրի գօտիների միջոցով համագործակցութիւնը նոր թափ կը հաղորդի երկկողմ առեւտրաշրջանառութեան», նշեց նախարարը:

ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան

Ան ընդգծեց, որ Հայաստանի մէջ իրանցիները 2-րդ ամենամեծ օտարերկրյայ ներդրողներն են՝ զիջելով միայն Ռուսաստանին: Միայն այս տարուան առաջին կիսամեակին իրանեան մօտ 300 ընկերութիւն բացուած է Հայաստանի մէջ: Քերոբեանի համոզմամբ՝ սա լաւ կշռոյթ է, սակայն այն աւելցնելու հնարաւորութիւններ կան:

Միքայէլ Մինասեանի Նկատմամբ Հանրային Քրէական Հետապնդում Յարուցուած է

Սուրբ Աթոռի մէջ նախկին դեսպան Միքայէլ Մինասեանի նկատմամբ հանրային քրէական հետապնդում յարուցուած է, կը տեղեկացնէ Գլխաւոր Դատախազութիւնը:

Ըստ դատախազութեան՝ Մինասեան կը մեղադրուի առանձնապէս խոշոր գումարի՝ շուրջ 333 միլիոն 861 հազար 167 դրամի լուացման համար:

Դատախազութիւնը կը նշէ, որ դեռ 2010-ին Պաշտպանութեան նախարարութեան պատկանող «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերութեան 4 միլիառ 646 միլիոն 400 հազար դրամ շուկայական արժէքով գոյքը 3 միլիառ 600 միլիոն դրամով օտարուած է Մինասեանի կողմէ ղեկավարուող «Զորագէտ Հիտրօ» ՍՊ ընկերութեան, իսկ Կառավարութիւնն ալ արտօնութիւն տալու նպատակով ամիսներ անց փոքր ջրելեկտրակայանների համար սահմանուած 10 ՄՎԹ հզօրութեան փոխարէն առաւելագոյն հզօրութիւն սահմանած է մինչեւ 30 ՄՎԹ հզօրութիւնը, արդիւնքով՝ մեծ ՀԷԿ հանդիսացող միակ՝ 26,4 ՄՎԹ հզօրութեան «Զորագէտ Հիտրօ» ընկերութեան ջրելեկտրակայանը ընդգրկուած է փոքր ՀԷԿ-երու ցանկին մէջ:

Սուրբ Աթոռի մէջ նախկին դեսպան Միքայէլ Մինասեան

Դատախազութիւնը կը նշէ, որ Մինասեանը քօղարկած է, որ ընկերութեան 30 տոկոս բաժնեմասերու իրական շահառուն է, որուն հետեւանքով 2011-2016 թուականներու ընթացքին ստացած է 1 միլիառ 113 միլիոն 698 հազար 628 դրամ շահաբաժին:

Հայաստանի Մէջ Ապաստան Ստանալու Համար Դիմած են Ատրպէյճանի եւ Թուրքիոյ Քաղաքացիներ

2023 թ. առաջին կիսամեակին 440 մարդ դիմած է Հայաստանի Հանրապետութեան մէջ ապաստան հայցելու համար:

Ըստ ՀՀ Ներքին Գործերու Նախարարութեան Գաղթականութեան եւ Քաղաքացիութեան Ծառայութեան տուեալներուն՝ ցանկին մէջ կան Ատրպէյճանի 2 եւ Թուրքիոյ 10 քաղաքացիներ: Ատրպէյճանի քաղաքացիներէն մէկուն դիմումը կարճուած է, երկրորդինը նշուած չէ:

Թուրքիոյ 10 քաղաքացիներէն երկուքին դիմումը կարճուած է, մէկը՝ մերժուած, միւս դիմումներու ընթացքին մասին չի նշուիր:

Ի դէպ, աշխարհի ամենանավտանգ 117 երկիրներու շարքին Հայաստանը 25-րդն է:

ԼՈՒՐԵՐ

Հաւաստի Տեղեկութիւններ Հասած Են Լաչինի Միջանցքով ԼՂ-էն Ելք Թոյլ Տալու, Մուտք Թոյլ Չտալու Ծրագիրներու Մասին. Փաշինեան

ՀՀ կառավարութեան հերթական նիստին, նախքան օրակարգային հարցերու քննարկումը վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման, վերջին օրերուն տեղի ունեցող գործընթացներուն:

Վարչապետը, մասնաւորապէս, նշած է.

«Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումն Ատրպէյճանի կողմից շարունակւում է եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան, մասնաւոր հատուածի, Ֆրանսայի կողմից Լեռնային Ղարաբաղի համար նախատեսուած մօտ 400 թոն մարդասիրական բեռը շարունակում է սպասել Լաչինի միջանցքի մուտքի մօտ: Միեւնոյն ժամանակ, մարդասիրական իրավիճակը Լեռնային Ղարաբաղում շարունակում է մնալ լարուած: Իրադրութեան միակ փոփոխութիւնն այն է, որ Կարմիր Խաչի եւ Լեռնային Ղարաբաղում Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախմբի միջոցով բուժման կարիք ունեցող եւ այլ քաղաքացիների որոշակի շարժ է սկսուել Լաչինի միջանցքով:

«Միեւնոյն ժամանակ, մեզ հաւաստի տեղեկութիւններ են հասել, թէ ծրագրեր են մշակւում Լաչինի միջանցքը միակողմանիօրէն բացելու, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղից ելք թոյլ տալու, մուտք թոյլ չտալու ուղղութեամբ:

«Ուզում եմ յիշեցնել, որ այս պահին էլ Հայաստանի Հանրապետութիւնում են գտնւում Լեռնային Ղարաբաղի բազմաթիւ բնակիչներ, որոնք չեն կարողանում վերադառնալ Լեռնային Ղարաբաղ: Նրանցից շուրջ 5 հազարը՝ նախորդ տարուայ Դեկտեմբերից ի վեր Լաչինի միջանցքի ապօրինի փակ լինելու հետեւանքով, եւս շուրջ 30 հազարը՝ 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 7-րդ կէտի չկատարման հետեւանքով: Յիշեցնեմ, որ 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 7-րդ կէտն ազդարարում է. «Ներքին տեղահանուած անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխաւոր յանձնակատարի գրասենեակի հսկողութեան ներքոյ»:

ՀՀ Վարչապետ
Նիկոլ Փաշինեան

«Այս դրոյթի չկատարումը եւ միւս փաստերը շարունակաբար վկայում են, որ Ատրպէյճանի հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղի հայութեան ցեղային զտման ճանապարհով Լեռնային Ղարաբաղից հեռացնելն է՝ լինի դա սովահարութեան, ռազմական գործողութեան, թէ այլ միջոցներով»:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ Պաքուն տարբեր միջոցներով շարունակաբար կը հարուածէ Ստեփանակերտի հետ երկխօսութիւնը՝ փորձելով անոր պատասխանատուութիւնը դնել Լեռնային Ղարաբաղի վրայ:

«Մեր ունեցած տեղեկութիւնները վկայում են, որ Պաքուն տարբեր միջոցներով շարունակաբար տորպեդահարում է Ստեփանակերտի հետ երկխօսութիւնը՝ փորձելով դրա պատասխանատուութիւնը դնել Լեռնային Ղարաբաղի վրայ:

«Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշումը շարունակում է մնալ նոյնը Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներին ու անվտանգութեանն առնչուող հարցերը պէտք է հասցեագրուեն Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան միջոցով՝ միջազգային մեխանիզմի շրջանակներում», ընդգծեց Փաշինեան:

«Միեւնոյն ժամանակ, ուզում եմ ընդգծել Հայաստանի Հանրապետութեան հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին: Պիտի տեղեկացնեմ, որ մենք ատրպէյճանական կողմին ենք փոխանցել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի մեր նոր առաջարկները», ըսաւ վարչապետ Փաշինեան:

Լեւոն Տէր Պետրոսեանը Հանդիպած է Գագիկ Ծառուկեանին

Գագիկ Ծառուկեան հանդիպած է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին: Այս մասին յայտնած է ՀՀ առաջին նախագահի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը:

Գագիկ Ծառուկեանը Լեւոն Տէր Պետրոսեանը շնորհաւորած է Անկախութեան հռչակագրի ընդունման 33-ամեակին առթիւ, կարեւորելով անոր դերակատարումը 3-րդ հանրապետութեան կայացման գործին մէջ:

Շուրջ մէկ ժամ տեւած ջերմ առանձնազրոյցի ընթացքին զրուցակիցները անդրադարձած են շրջափակման մէջ գտնուող Արցախի մէջ տիրող իրավիճակին, Հայաստանի ներկայիս խնդիրներուն եւ անոնց լուծման ուղիներուն: Կողմերը երկուստեք կարեւորած են երկրին մէջ առկայ խնդիրներու կարգաւորման համար անհրաժեշտ համազգային համերաշխութեան ու միասնականութեան գործօնը:

Հանդիպումը տեղի ունեցած է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի տան մէջ:

www.massisweekly.com
Weekly News Updates

«Պիտի Գործէ Մէկ Ճանապարհ եւ Այդ Լաչինի Ճանապարհն է, Ուրիշ Ճանապարհ Չկայ». Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեան

Արցախի մէջ ամէն երրորդ մահուան պատճառը արդէն թերսնումն է: Անդրադառնալով երկրին մէջ ստեղծուած իրավիճակին՝ Արցախի Ազգային Ժողովի շէնքին առջեւ հաւաքուած հանրութեան հետ հանդիպման ընթացքին յայտնեց Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը:

«Սով, ամէն ինչի պակաս, յղիները ստեղծուած իրավիճակի հետեւանքով կորցնում են երեխաներին: Հասել ենք այս վիճակին, որովհետեւ հաւատացել ենք բոլորին՝ գերտէրութիւններին, ՄԱԿ-ին», նշեց Յարութիւնեան:

Արցախի նախագահը ընդգծեց, որ Օգոստոս 28-ի երեկոյեան Արցախի քաղաքական ուժերը Ազգային Ժողովին մէջ շուրջ 6 ժամ հրատապ քննարկում ունեցած են, սակայն միասնական որոշում չեն կայացուցած: Որպէս երկրի նախագահ՝ ինք այս պահուն պարտաւոր է որոշում կայացնել, այլ հարց է, որ այն կրնայ չընդունուիլ ժողովուրդին կողմէ.

«Շատ կարճ ժամանակահատուածում՝ մի քանի օրուայ ընթացքում, պէտք է լուծենք մեր հացի խնդիրը, մարդասիրական խնդիրը»:

Հանրութեան վրդովմունքին, որ իրենց պայքարը հացի խնդիր չէ, այլ՝ հայրենի հողին վրայ ապրելու եւ ապագան կառուցելու խնդիր, Արայիկ Յարութիւնեանը արձագանգեց.

«Մենք մենակ ենք: Մենք ընկերներ եւ աջակցութիւն չունենք:

Նախագահ
Արայիկ Յարութիւնեան

Բոլոր հարցերը ձեզ հետ միասին կը լուծենք»:

Երկրին ղեկավարը հաւաստիացուց, որ կը քննարկուի միայն մէկ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի բացման հարցը:

«Անկախ ամէն ինչից՝ ճանապարհի հարցը պիտի լուծուի: Մինչեւ այսօր սպասել ենք, հաւատացել ենք՝ փութինին էլ ենք հաւատացել, Պայտընին էլ ենք հաւատացել, Մաքրոնին ու Հայաստանի իշխանութեանն էլ ենք հաւատացել Բայց մեզ թողել են պատանդի կարգավիճակում», ըսաւ ան՝ եւս մէկ անգամ վստահեցնելով, որ Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական խնդիրը շուտով կը կարգաւորուի:

Կրակոցներ Արցախի Նախագահի Նստավայրին Ուղղութեամբ. Երկու Անձ Բերման Ենթարկուած է

Արցախի Ներքին Գործերու Նախարարութեան ոստիկանութիւնը կը հաղորդէ նախորդ գիշեր Լեռնային Ղարաբաղի նախագահի նստավայրին ուղղութեամբ արձակուած կրակոցներուն մասին, երկու անձ բերման ենթարկուած է, յարուցուած է քրէական գործ:

«Օգոստոսի 28-ին ժամը 03:05-ին ոստիկանութեան ՊՊԾ գումարտակի ոստիկանը հերթապահ մասում հաղորդել է, որ Ստեփանակերտ քաղաքի Փետրուարի 20 փողոցում՝ Արցախի հանրապետութեան նախագահի նստավայրի ուղղութեամբ գինուած յարձակում է տեղի ունեցել: Դէպքի վայր մեկնած ոստիկանութեան Ստեփանակերտ քաղաքի վարչութեան գործնական խումբը, տաք հետքերով ձեռնարկած միջոցառումների արդիւնքում, Մարտունի փողոցից նշուած յանցագործութիւնը կատարելու կասկածանքով բերման է ենթարկել անսթափ վիճակում գտնուող երկու քաղաքացու՝ Ստեփանակերտ քաղաքի բնակիչներ Տ.Հ.-ին (ծնուած 1983թ.) եւ Ա. Ա.-ին (ծնուած 1981թ.)», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ոստիկանութեան ծառայողները պարզած են, որ գիշերը ժամը 3-ի սահմաններուն, «Նախնական համաձայնութեամբ եւ ոգելից խմիչքներու ազդեցութեամբ՝ վերջիններս ներկայացած են նախագահի նստավայր եւ կրակոցներ արձակած շէնքին եւ տարածքին մէջ ծառայութիւն իրականացնող անվտանգութեան աշխատակիցներուն ուղղութեամբ:

Նախապատրաստուած նիւթերը ուղարկուած են Քննչական կոմիտէ, որտեղ յարուցուած է քրէական գործ:

Պաքուն 40 Թոն Ալիւր Կ'ուզէ Ուղարկել Արցախ՝ Աղտամ-Ստեփանակերտ Ճանապարհով

Ատրպէյճանը երկու բեռնատարով 40 թոն ալիւր կ'ուղարկէ Լեռնային Ղարաբաղ՝ Աղտամ-Ստեփանակերտ ճանապարհով:

Պաքուն չի յստակեցներ, թէ արդեօ՞ք համաձայնութիւն ձեռք բերած է Արցախի իշխանութիւններուն հետ՝ բանալ Աղտամի ճանապարհը:

Ատրպէյճանի Կարմիր Մահիկի ընկերութեան նախագահ, պատգամաւոր Նովրուզ Ասլան ըսած է, թէ դրական արձագանգ կ'ակնկալեն Ղարաբաղի հայերէն:

«Մենք ուշադիր պիտի հետեւինք այնտեղ տեղի ունեցող գործընթացներուն: Կը հաւատամ, որ այս քայլը դրական պիտի ընդունուի թէ՛ հասարակութեան, թէ՛ միջազգային հանրութեան, թէ՛ Խանքենդիի մէջ (Ստեփանակերտ) ապրող հայազգի բնակչութեան կողմէ», ըսած է Ասլան:

Եթէ Ունենանք Խաղաղութիւն, Կ'ունենանք Անկախութիւն. Փաշինեան

Հայաստանի Անկախութեան հռչակագրի ընդունման 33-րդ տարեդարձին առիթով վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդէս եկաւ ուղերձով՝ մասնաւորապէս, նշելով, որ Անկախութեան հռչակագիրը շրջադարձային փաստաթուղթ է, որով դրուեցաւ այսօրուան պետականութեան հիմքը:

«Անկախութեան հռչակագրով մենք հռչակեցինք Խորհրդային Միութիւնից հեռանալու ուղեգիծը, բայց եւ փակեցինք Խորհրդային Միութիւնից հեռանալու մեր բոլոր ճանապարհները, ասել է, թէ 20-րդ դարավերջին ընդունուած Անկախութեան հռչակագրով որդեգրեցինք մի բանաձեւ, որը 20-րդ դարասկզբին մեզ արդէն իսկ բերել էր անկախութեան կորստի», ըսած է Գործադիրի ղեկավարը:

Ընդգծելով, որ 2018 թուականին Հայաստանի վարչապետի պաշտօնը ստանձնելէ առաջ եւ անկէ յետոյ Հայաստանի անկախութեան Հռչակագրին վերաբերած է ինչպէս «աստուածաշնչեան ուղերձ», Փաշինեան միեւնոյն ժամանակ շեշտած է, որ Հռչակագիրը որքան ալ հիմնարար փաստաթուղթ է, կարիք ունէր եւ կարիք ունի խորքննութեան՝ շեշտելով, որ որովհետեւ, այնուամենայնիւ, քաղաքական փաստաթուղթ է, անկէ բխող բոլոր հետեւութիւններով:

«Եւ հիմա, անկախութեան Հռչակագրի 33-րդ տարեդարձի օրն ուզում եմ ընդգծել, որ մեր կառավարութեան որդեգրած խաղաղութեան օրակարգը՝ անկախութեան օրակարգն է, որովհետեւ, եթէ ունենանք խաղաղութիւն, կ'ունենանք անկախութիւն: Քանի դեռ չունենք խաղաղութիւն, ԽՍՀՄ ուրուականը թեւածելու է մեր երկնքում, մեր տարածաշրջանի երկնքում: Ես ընտրում եմ անկախութիւնը, ինքնիշխանութիւնը, ժողովրդավարութիւնը: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին ընտրում է անկախութիւնը, ինքնիշխանութիւնը, ժողովրդավարութիւնը», իր ուղերձին մէջ ըսած է Փաշինեան:

Օրուան առթիւ ուղերձներ յղած են նաեւ Հայաստանի նախագահը, Ազգային Ժողովի նախագահը, այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, հասարակական-քաղաքական գործիչներ:

ԵԽ Մարդու Իրաւունքներու Յանձնակատարը Լեռնային Ղարաբաղ Մեկնելու Պատրաստակամութիւն Կը Յայտնէ

Եւրոխորհրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Տունիա Միյաթովիչ կը շարունակէ լրջօրէն մտահոգուած մնալ «2022 թուականի Դեկտեմբերէն Լաչինի միջանցքով անցնող ճանապարհի փակումէն յետոյ Լեռնային Ղարաբաղի մէջ հումանիտար իրավիճակի եւ անոր բնակչութեան մարդու իրաւունքներուն հետ կապուած»:

Եւրոխորհրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Տունիա Միյաթովիչ

«Կը կրկնեմ այդ ժամանակ իմ ըրած կոչը՝ վերականգնել ազատ տեղաշարժը այդ ճանապարհով», կը յայտարարէ Միյաթովիչ իր պաշտօնական կայքէջին վրայ հրապարակած յայտարարութեան մէջ:

«Չնայած իմ եւ բազմաթիւ այլ միջազգային շահագրգիռ կողմերու կոչերուն, կը հաղորդուի, որ մարդասիրական եւ մարդու իրաւունքներու իրավիճակը տարածաշրջանին մէջ աւելի վատթարացել՝ ազդելով յատկապէս աւելի խոցելի խաւերուն վրայ՝ մարդոց տեղաշարժի եւ սնունդի մատակարարումներու եւ շտապ բժշկական օգնութեան հասանելիութեան երկարատեւ խափանումներու պատճառով», կ'ընդգծէ յանձնակատարը՝ վկայակոչելով Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէին հաղորդումները:

«Համապատասխան շահագրգիռ կողմերը պէտք է անյապաղ լուծում գտնեն՝ խուսափելու համար տեղի բնակչութեան դիմագրաւած շատ վտանգաւոր իրավիճակի հետագայ վատթարացումէն եւ երաշխաւորելու մարդասիրական օգնութիւն տրամադրողներուն եւ մարդու իրաւունքներու պաշտպանութիւնը ապահովողներու անվտանգ եւ ազատ անցումը: Ինչպէս նշուած է իմ 2021 թուականի յուշագրին մէջ, Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմէ պէտք է ջանքեր գործադրուին հաշտեցման ճանապարհով յառաջ շարժելու եւ բոլոր մարդոց համար կայուն խաղաղութիւն ապահովելու համար», կը յայտարարէ Տունիա Միյաթովիչը եւ կը վերահաստատէ իր յանձնառութիւնն ու պատրաստակամութիւնը՝ «ներգրաւուելու բոլոր համապատասխան գրուցակիցներուն հետ եւ մեկնելու Լեռնային Ղարաբաղ՝ օգնելու յաղթահարել մարդու իրաւունքներու առկայ մարտահրաւէրները»:

Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարը Անբարոյական Որակած է Ատրպէյճանի Քաղաքականութիւնը ԼՂ-ի Նկատմամբ

üñ ³ Ýë ³ÙÇ ³ ñ ï ³ùÇÝ ·áñÍ»ñáõ Ý ³ Ë ³ ñ ³ ñ ø ³ ÃñÇÝ ¶áÉáÝ ³

Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Քաթրին Գոլոնան անօրինական ու անբարոյական որակած է Լեռնային Ղարաբաղի հայերուն արտագաղթել ստիպելու Ատրպէյճանի քաղաքականութիւնը:

Վկայակոչելով Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական կայքը, այս մասին Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը խօսած է Ֆրանսայի մէջ հաւատարմագրուած դեսպաններու համաժողովին ունեցած ելոյթին ժամանակ:

«Խեղդամահ ընելու ռազմավարութիւնը, որուն նպատակն է հրահրել հայերու զանգուածային արտագաղթը Լեռնային Ղարաբաղէն, անօրինական է, ինչպէս արդէն սահմանած է Միջազգային դատարանը: Այդ քաղաքականութիւնը նաեւ անբարոյական է», ըսած է Գոլոնան:

Ան նաեւ նշած է, որ Ֆրանսան զօրաշարժի կ'ենթարկէ ուժերը յանուն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ արդար եւ կայուն խաղաղութեան հաստատման: Գոլոնան նշած է, որ այդ թոյլ պիտի տայ սահմանազատել երկու երկիրներու սահմանները:

Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին կարծիքով՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ արդար եւ կայուն խաղաղութիւնը նաեւ հնարաւորութիւն պիտի տայ, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ապրի իր բնօրրանին մէջ եւ յարգուին անոնց իրաւունքները, մշակոյթը եւ պատմութիւնը:

Պաքուի Դատախազութենէն Կը Յայտնեն, Որ Բերձորի Միջանցքին Վրայ Առեւանգուած Հայերը Պէտք է Արտաքսուին Հայաստան

Լաչինի միջանցքի անցակէտին վրայ առեւանգուած Հայ երիտասարդները

Պաքուի գլխաւոր դատախազութիւնը յայտարարած է Լաչինի միջանցքի անցակէտէն երեք հայ ֆութպոլիստներու ձերբակալութեան մասին, որոնք կը մեղադրուին «Ատրպէյճանի դրօշը պղծելու» մէջ:

Կը նշուի, որ 2021 թուականին որոշ լրատուամիջոցներու մէջ տեսանիւթեր տարածուած են, ուր հայ ֆութպոլիստները վիրաւորական գործողութիւններ կը կատարեն Պաքուի դրօշին նկատմամբ, ինչին առնչութեամբ հետաքննութիւն սկսած է Քրէական օրէնսգիրքի երկու յօդուածներով:

«Կ'ենթադրուի, որ Ատրպէյճանը մարդասիրական մօտեցում ցուցաբերէ, եւ հաշուի առնելով, որ ձերբակալուածները երիտասարդ են եւ մարզիկներ, անոնք կրնան ենթարկուիլ վարչական պատասխանատուութեան: Յամենայն դէպս, Ատրպէյճանի տարածքին չեն կրնար ապրիլ այն մարդիկ, որոնք կը վիրաւորեն Ատրպէյճանի դրօշը: Անոնք պէտք է արտաքսուին Հայաստան», յայտնած են Պաքուի գլխաւոր դատախազութենէն:

Պաքուն Համաձայնութիւն Չէ Տուած Քասփրշիքի Ատրպէյճան Այցին

ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասփրշիքը, բացի Հայաստան այցէն, նախատեսած է նաեւ Ատրպէյճան այցելել, սակայն պաշտօնական Պաքուն այդ այցին համաձայնութիւն չէ տուած, կը յայտնեն ատրպէյճանական լրատուամիջոցները:

Կը նշուի, որ Պաքուն նման այցի անհրաժեշտութիւն չէ տեսած եւ «այդ համարած է ժամանակի անիմաստ կորուստ»:

Անճէյ Քասփրշիքը Օգոստոս 25-ին այցելած է Կոռնիձոր՝ Լաչինի միջանցքի սկզբնամաս, այնտեղ ծանօթացած է իրավիճակին: Քասփրշիքը Հայաստան ժամանած է ԵԱՀԿ գործող նախագահ Պուլար Օսմանիի յանձնարարութեամբ՝ Լաչինի միջանցքին ստեղծուած իրավիճակին ծանօթանալու նպատակով:

Այլեւս Դիւանագիտութեան Ժամանակը Չէ

Շարունակուած էջ 1-էն

գործունէութեան պայմանները: Այս ուղղութեամբ մենք միջազգային մակարդակով կրկին հանդէս պիտի գանք դիւանագիտական նախաձեռնութեամբ՝ նպատակ ունենալով զօրացնել ճնշումը», ըսած է Մաքրոն:

«Figaro» թերթը իր կարգին կը գրէ որ, Ֆրանսան կը պատրաստուի բանաձեւ ներկայացնելու ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդ՝ օգնելու Ատրպէյճանի շրջափակման պատճառով սովամահութեան եզրին կանգնած Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակիչներուն:

Ֆրանսային Նախագահի յայտարարութիւններէն ետք հեռախօսազրոյց տեղի ունեցած է Էմանուէլ Մաքրոնի եւ Վարչապետ Նիկոլ Փաշինեանի միջեւ:

Զրուցակիցները անդրադարձած են տարածաշրջանին մէջ առկայ իրադրութեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդգծած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամի օրէ օր խորացումը, ինչպէս նաեւ շեշտած է անոր յաղթահարման ու լուծման ուղղուած քայլերու անհրաժեշտութիւնը:

Զրուցակիցները ընդգծած են տարածաշրջանին մէջ կայունութեան ու խաղաղութեան ապահովման ուղղութեամբ հետեւողական ջանքերուն կարեւորութիւնը:

ԱՄՆ Վարչակազմը Պէտք է Գործէ. Ատամ Շիֆ

ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատի անդամ Ատամ Շիֆը Թուիթըր ընկերային ցանցին մէջ տեսանիւթ հրապարակած է՝ ԱՄՆ իշխանութիւններուն կոչ ընելով գործելու Լեռնային Ղարաբաղի շրջափակման վերջ դնելու համար: Գոնկրէսականը իր տեսաուղերձին մէջ ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակը, այդ շարքին՝ սնունդի, դեղորայքի եւ այլ անհրաժեշտ պարագաներուն պակասը, որուն հետեւանքով մարդիկ սկսած են մահանալ:

«Այս հարցին հարկաւոր է լուծում տալ եւ հրատապ կերպով», նշած է Շիֆ:

Ան նաեւ յիշեցուցած է վերջերս Լաչինի միջանցքի արգելափակման հարցով ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ տեղի ունեցած նիստի մասին՝ շեշտելով, որ «անոր, սակայն, ոչինչ չհետեւեցաւ»:

«Մեզի հարկաւոր է բանաձեւ, որ պիտի պահանջէ վերջ դնել միջազգային իրաւունքի այս խախտման... Եւ ԱՄՆ կառավարութիւնը, Պայտընի վարչակազմը պէտք է շատ աւելին ընեն: Անոնք պէտք է Ատրպէյճանը զրկեն ռազմական օգնութենէն: Անոնք պէտք է այնպէս ընեն, որ այս անօրինական շրջափակումը աւարտուի: Մենք պէտք չէ որեւէ գումար տրամադրենք Ատրպէյճանին... Մենք չենք կրնար լռել: Վարչակազմը պէտք է խօսի, պէտք է գործէ, ինչ-որ բան պէտք է կատարուի, հակառակ պարագային՝ աւելի շատ մարդիկ պիտի մահանան», յայտնած է Շիֆ:

Գոնգրէսականը նաեւ յիշեցուցած է Հայաստանի դէմ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմին մասին, որուն հետեւանքով հազարաւոր մարդիկ զոհուեցան:

Երեւանի Մօտալուտ Ընտրութիւնները

Շարունակուած էջ 1-էն

ւանի քաղաքապետ դարձած՝ կատակերգակ Հայկ Մարութեանը: Ան այժմ կը գլխաւորէ անծանօթ Ազգային Յառաջդիմութիւն կուսակցութիւնը, որ կրնայ յայտնուիլ Երեւանի աւագանիէն ներս, շնորհիւ Մարութեանի, որպէս դերասան վայելած համակրանքին:

Աւագանիէն ներս յայտնուելու առիթ ունին նաեւ Արամ Սարգսեանի գլխաւորած Հանրապետութիւն կուսակցութիւնը եւ Էտմոն Մարուքեանի հիմնած Լուսաւոր Հայաստանը:

Այն պարագային երբ Քաղաքացիական Պայմանագիրը չկարողանայ առանցինը մեծամասնութիւն կազմել, Հանրապետութիւնը եւ Լուսաւոր Հայաստանը կը նկատուին համախոհական դաշինքի մը ձեւաւորման գլխաւոր թեկնածուները, նկատի ունենալով որ Թանդիլեան եւ Մարութեան այժմէն իսկ կը յայտարարեն որ, իրենց մօտ բացառուած է իշխող ուժին հետ դաշինք կազմելու հաւանականութիւնը:

Ուշագրաւ է որ, այս ընտրութիւններու քարոզարշաւը սահմանափակուած չէ մայրաքաղաքի վիճակի բարելաւման եւ ժողովուրդի կենցաղային խնդիրներու լուծման առաջարկներով: Կարգ մը թեկնածուներ կ՚արծարծեն նաեւ Արցախի հարցը եւ կը քննադատեն իշխանութիւններու վարած արտաքին քաղաքականութիւնը:

Այս ընտրութիւնները որոշ չափով ցոյց պիտի տան նաեւ հասարակութեան բաւարուածութիւնը իր տնտեսական վիճակով: Իշխանութիւնները յաճախ կը խօսին ու թիւեր կը հրապարակեն տնտեսական աճի, նոր աշխատատեղերու ստեղծման եւ աշխատավարձերու բարձրացման մասին: Արդեօ՞ք այդ բոլորը զգալի են ժողովուրդի առօրեայ կեանքէն ներս: Այդ հարցը եւս պատասխան պիտի ստանայ յառաջիկայ ընտրութիւններուն ընթացքին:

Ամենէն մեծ հարցականը կը մնայ մասնակցողներու թիւի պարագան: Հայաստանի քաղաքացիներուն մօտ ընտրութիւններու նկատմամբ դեռահաւատութիւնը կը շարունակէ մնալ բաւական բարձր: Ժողովրդավարութեան զարգացման գլխաւոր ազդակներէն մէկը ընտրութիւններուն հասարակութեան մասնակցութեան թիւի բարձրացումն է: Այս ուղղութեամբ դաստիարակչական գործ ունին կատարելիք ոչ միայն իշխանութիւնները, այլ եւ հասարակական կազմակերպութիւնները:

Երեւանի սպասուող ընտրութիւնները կարեւոր դեր պիտի կատարեն ստուգելու համար ժողովուրդի տրամադրութիւնները եւ կեդրոնական իշխանութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»



Massis Weekly

Volume 43, No. 32 **Saturday, September 2, 2023**

Macron: No Longer Time for Diplomacy, France Must Sustain Pressure for Humanitarian Access

PARIS — French President Emmanuel Macron has stated that France is exerting maximum efforts to restore humanitarian access to Nagorno-Karabakh. In an interview with Le Point newspaper, Macron emphasized that France is diligently working to facilitate an agreement between Armenia and Azerbaijan, aiming for a sustainable peace.

Regarding the nearly nine-month blockade of Artsakh, Macron highlighted in the interview that diplomacy alone is insufficient at this juncture. He underscored France's commitment to upholding pressure for humanitarian access, elaborating that the country is actively pursuing initiatives to deliver essential goods and medicines while ensuring unobstructed entry to Karabakh. However, the specifics of these initiatives or the resolution itself were not elaborated upon by the French President, who is a permanent member of the UN Security Council.

"We have consistently advocated for the sovereignty of peoples. The Nagorno-Karabakh issue is intricate, particularly concerning the equitable treatment of peoples. I am not inclined to align with hardline stances on this matter. Presently, our primary focus is on establishing enduring peace between Armenia and Azerbaijan, while safeguarding the interests of various peoples and cultures. This peace accord is imperative, but it must conform to international law," President

Continued on page 4

Azerbaijan Kidnaps 3 Artsakh Students at Illegal Lachin Checkpoint

STEPANAKERT — Three students from Artsakh were detained by Azerbaijani security forces on Monday while traveling to Armenia through the Lachin corridor.

Karabakh officials said that the young men, identified as Alen Sargsyan, Vahe Hovsepyan and Levon Grigoryan, were kidnapped at the Azerbaijani checkpoint blocking the corridor as they were escorted by Russian peacekeepers along with other Karabakh civilians.

One of the officials, Artak Beglaryan, told RFE/RL's Armenian Service that the peacekeepers are negotiating with the Azerbaijani side to try have them freed. NKR President Arayik Harutyunyan held an emergency session of his security council later in the day.

"Azerbaijan is continuing its genocidal policy towards the people of Artsakh, once again violating international humanitarian law," read a Karabakh statement issued shortly after the detentions.

The Azerbaijani authorities did not immediately comment on the arrests. But media outlets linked to them reported that the three Karabakh Armenians are suspected of being members of a Karabakh football team that had "disrespected" the Azerbaijani national flag in a 2021 video posted on social media.

Continued on page 4

Standard & Poor's Upgrades Armenia's Ranking to 'BB-' From 'B+'

NEW YORK — Standard & Poor's credit rating agency has upgraded Armenia's ranking from 'BB-' From 'B+' ' and affirmed its short-term foreign and local currency sovereign credit ratings at 'B'. The outlook is stable.

The stable outlook balances Armenia's strong economic growth prospects and improved fiscal balance sheet against its moderately weak external position and elevated geopolitical risks.

According to the agency, the upgrade reflects the improvements in Armenia's GDP per capita and fiscal performance. The country's close geographic, economic, and cultural ties with Russia have positioned it as one of the preferred destinations for Russian individuals and businesses seeking refuge from their home country's economic and political stresses. As a result, migrant and capital inflows have propelled economic growth, with real GDP in Armenia increasing by 12.6% in 2022, and have narrowed Armenia's

persistent fiscal and current account deficits," S&P says.

According to the agency, last year, spillovers from the Russia-Ukraine conflict helped Armenia's economy to expand significantly by 12.6%. This surge is primarily attributed to inward migration from Russia, which boosted the economy through various channels.

A substantial portion of migrants from Russia are skilled and young IT

Continued on page 4

Armenian Educational Benevolent Union Scholarship Fund Celebrates 5th Anniversary and Presents the 2023-2024 Scholarship Awards

PASADENA -- On Sunday, August 27, 2023, the Armenian Educational Benevolent Union (AEBU) Scholarship Fund Committee celebrated its 5th Anniversary and announced the 2023-2024 award recipients during a festive gala at the De Luxe Banquet Hall in Burbank, California.

The AEBU Scholarship Fund was established to encourage youth of Armenian descent to pursue higher education, be engaged in the Armenian community, and to give back through community service. This year, 14 recipients, seven (7) in the United States, four (4) in Armenia, and three (3) in Lebanon, were selected from a large pool of highly qualified candidates who had

Continued on page 3

Sharp Increase in Russian-Armenian Trade Turnover

TSAGHKADZOR — Prime Minister Nikol Pashinyan hailed on Thursday a continuing sharp increase in Armenia's trade with Russia which results in large measure from Western economic sanctions against Moscow.

Meeting with his visiting Russian counterpart Mikhail Mishustin, Pashinyan said it shows that Russian-Armenian relations remain "very strong" despite "problematic issues" causing friction between the two nations.

Russian-Armenian trade doubled last year and in the first half of this year as the South Caucasus country took advantage of the barrage of sanctions imposed on its main trading partner following the Russian invasion of Ukraine. This, coupled with other cash inflows from Russia, is the main reason why the Armenian economy grew by over 12 percent in 2022.

According to the Armenian National Statistical Committee, the trade turnover between Armenia and Russia in the first half of 2023 amounted to about $3.1 billion, surging by 87.3% year-on-year. Armenian exports to Russia amounted to about $1.7 billion, increasing 3-fold, while imports amounted to $1.4 billion with a 28.6% growth.

"It must be said that our commercial exchange reached $5 billion in 2022 and this growth is continuing. This year we have already passed the $3 billion mark and hope that this year we will surpass last year's volume," Pashinyan told Mishustin in his opening remarks.

"We have a very strong and durable relationship," he added during talks held in the Armenian resort town of Tsaghkadzor on the sidelines of a meeting of the prime ministers of Eurasian Economic Union member states.

"Despite the difficult foreign economic situation, Russia's trade and economic ties with Armenia are growing stronger … and this makes us happy," Mishustin said for his part.

"We continue cooperation in energy, peaceful nuclear industry, mining and transportation logistics. There are a number of high-tech projects. I think that our business missions, which regularly arrive in Armenia, have a very good impact on the overall economic development. We propose to intensify the work in all directions with the focus on innovation projects," Mishustin said.

In line with Russia's broader efforts to reduce its dependence on the U.S. dollar, Mishustin called for greater use of the Russian and Armenian currencies in bilateral trade. He also proposed that Moscow and Yerevan "accelerate work" on joint investment projects in Armenia.

The soaring trade is primarily driven by Armenian exports to Russia that tripled in 2022 and January-June 2023. Goods manufactured in third countries and re-exported by Armenian firms are thought to have accounted for most of that gain. They include consumer electronics as well as other hi-tech goods and components which Western powers say could be used by the Russian defense industry.

French Foreign Minister Slams Illegal and Immoral Azerbaijani Blockade of Artsakh

PARIS — France stepped up on Tuesday criticism of Azerbaijan's blockade of Nagorno-Karabakh's only land link with the outside world, with Foreign Minister 0 saying that it is aimed at forcing the Karabakh Armenians to leave their homeland.

"The strategy of stifling, which aims to provoke a mass exodus of Armenians from Nagorno-Karabakh, is illegal, as was established by the [International Court of Justice,] and it is also immoral," Colonna declared during an annual conference of French ambassadors held in Paris.

She also noted that France will mobilize forces to establish a just and lasting peace between Armenia and Azerbaijan. Colonna noted that this will make it possible to delimit the borders of the two countries.

According to the French Foreign Minister, a just and stable peace between Armenia and Azerbaijan will also allow the people of Nagorno-Karabakh to live in their homeland and their rights, culture and history will be respected.

UK Church Leaders Appeal to the Prime Minister to Intervene In the Humanitarian Crisis in Nagorno Karabakh

LONDON — Tens of thousands of Armenians face starvation as a direct result of the current Azerbaijan blockade of Nagorno Karabakh, according to UK Christian leaders including Armenian, Apostolic, Anglican, Catholic, Orthodox Church leaders.

In their letter the group, including former Archbishop of Canterbury, Lord Williams, and Bishop Hovakim, Primate of the Armenian Church of the UK and Ireland, call on the Prime Minister to take decisive action to prevent the unfolding genocide in Nagorno Karabkh. The leaders highlight the plight of 120,000 Armenians, including 30,000 children, as a result of the blockade since 12 December last year:

Food, medicine, gas, and other vital supplies have been prevented from reaching the territory;

Hospitals are severely affected and cannot carry out planned procedures;

Miscarriages and stillbirths have risen by 30 per cent;

Malnutrition is widespread and cases of death by starvation have been reported;

Evacuations of the critically ill have been suspended;

Dialysis machines stand idle for want of necessary blood products.

The leaders argue that mass starvation is likely in the coming months.

"Our fears are also increasing for the lives of the 30,000 children and pregnant women affected by this unjustifiable and intolerable situation," they write.

Bishop Hovakim Manukyan, the Primate of the Armenian Church of the United Kingdom said: "As Christians and religious leaders we have the duty to speak out against the worsening humanitarian crisis. Our Lord commanded us that 'Whatever you do for one of the least of these brothers and sisters of mine, you do for me'".

Signatories include the former Archbishop of Canterbury, Dr Rowan Williams, Archbishop Nikitas, the Primate of the Greek Orthodox Church and President of the Conference of European Churches, Archbishop Angaelos of the Coptic Orthodox Church and Papal Legate to the United Kingdom; Bishop Mark Royal, General Secretary of Churches Together in England and the C of E Bishops of Southwark and Manchester.

Indian and Armenian Security Council Secretaries Discuss Implementation of Joint Programs in Space Industry

NEW DELHI — Secretary of the Security Council of Armenia Armen Grigoryan met in New Delhi with Indian Prime Minister Narendra Modi's National Security Advisor Ajit Doval.

In a statement on social media, Grigoryan said he congratulated Ajit Doval on the successful landing of Chandrayaan-3 lunar probe.

"I offered congratulations on the successful landing of the Chandrayaan-3 lunar probe. In this context we discussed the implementation of possible joint projects in space industry. We also discussed issues related to regional security developments, as part of which I briefed on the humanitarian crisis in Nagorno-Karabakh and attached importance to the involvement of the international community for overcoming it," Grigoryan said.

Grigoryan and Doval also discussed prospects for the development of relations in a number of other areas and issues related to regional security.

Grigoryan also spoke about the humanitarian crisis in Nagorno-Karabakh and emphasized the importance of the international community's participation in overcoming it.

Tumanyan International Storytelling Festival Launches Second Edition in the Mountains of Lori

LORI – The Tumanyan International Storytelling Festival, which launched in September 2022, is back for a second year, it was announced by festival co-founders Anoush Rima Tatevossian, Nyree Abrahamian and Tina Yesayan. The festival, which honors the legacy of noted 19th century poet, author, and public intellectual Hovhannes Tumanyan, will take place on Friday August 25th through Sunday August 27, and will bring visitors to the town of Tumanyan, to celebrate all forms of storytelling— including traditional Armenian folk tales, contemporary first person narratives, poetry, film, visual arts, theater, music, and audio storytelling. The theme of this year's festival is "place," in recognition of the breathtaking nature of Lori Province, and its significance in inspiring Tumanyan's body of work.

"When we launched the festival last year, it was our intention to create an immersive, inspiring weekend to reconnect contemporary audiences with the rich heritage and tradition of storytelling. With this edition, we have laid the groundwork to make this an annual event that will continue to grow, and celebrate Armenian storytelling in conversation with storytelling traditions from around the world." said Co-Founder Anoush Rima Tatevossian. The festival will feature three days of performances, workshops, hikes and activities for adults and children, held in the town's unique venues, including old factory buildings and a Soviet-era house of culture. A hike on the Giqor Trail will be accompanied by a telling of Tumanyan's story "Giqor," an intimate evening story-salon will feature folk tales in the Hamshen Armenian dialect by Mahir Özkan of Istanbul, and an evening of musical performances by Shushiki Band from Yerevan and Alin Demirdjian of Buenos Aires will take place under the stars.

Featured international artists include Kenyan-Scottish storyteller Mara Menzies, Lebanese performer & percussionist Raffi Feghali, and Raphael Rodan of the Mezrab Storytelling School of Amsterdam.

"Last year, we were blown away by the sense of community that developed during the festival and this year, we want to build on that," said Co-Founder Nyree Abrahamian. "I hope that the diverse range of stories shared at this year's festival will awaken people's imaginations and their compassion. I want them to leave with a heightened sense of curiosity about the world around them, and a deeper appreciation for the power of their own stories."

Another highlight of the weekend is a tour of the Abastan Artist Community, a converted former textile factory that serves as a creative residency space for a community of

international artists from Armenia, Russia, Iran, and other countries.

The weekend's performers and workshop leaders include:

Mara Menzies, award-winning Scottish-Kenyan storyteller & performer

Raphael Rodan, storytelling coach & co-artistic director of the Amsterdam Storytelling Festival

Torfeh Ekhlasi, Iranian visual artist

Sevana Tchakerian, French-Armenian multi-instrumentalist

Melisa Ferayan, Istanbul-based storyteller & educator

Mahir Özkan, published author of Hamshen folktales

Scout Tufankjian, acclaimed Armenian-American photojournalist

Shushiki Band, high-energy traditional Armenian folk band

Kourken Papazian, Beirut & Berlin-based documentary filmmaker

Dr. Hrach Martirosyan, Armenian linguist & scholar

Aram Pachyan, contemporary Armenian writer

Alin Demirdjian, Argentinian-Armenian singer-songwriter

For the full weekend program, visit.tumanyanstoryfest.com/program

The Tumanyan International Storytelling Festival is a project of the Tumanyan Development Foundation, a registered charitable foundation in Armenia founded in August 2020 with the purpose of creating opportunities to revitalize the town of Tumanyan through tourism and economic development projects. The concept was incubated by Artbox, a creative incubator developed by Creative Armenia and supported by the European Union and German Ministry for Economic Cooperation and Development (BMZ).

2023 Festival headline sponsors include the H. Hovnanian Family Foundation and the Calouste Gulbenkian Foundation. Partners and supporters include Children of Armenia Fund (COAF), the Hrant Dink Foundation, The British Council, Muziekgebouw Production House, Abastan Artist Community, and HikeArmenia.

www.massispost.com

Armenian Educational Benevolent Union

Continued from page 1

applied nationwide and from overseas.

The Armenian-American selected recipients were awarded their scholarships in the presence of the AEBU Scholarship Fund donors, friends, and family members during the event.

Mr. Stepan Hovagimian, Master of Ceremony, started the event with welcoming remarks.

The formal program began after dinner with a musical performance by the talented Mrs. Nektarine Chilyan, who delighted the audience playing the qanun and singing a collection of popular Armenian and international songs.

The keynote address was given by Dr. Houri Berberian, who holds the position of Professor of History and the Meghrouni Family Presidential Chair in Armenian Studies, as well as serving as the Director of Armenian Studies at the University of California, Irvine. In her presentation titled "Education, Scholarship, and Armenian Women at the Forefront," Dr. Berberian established a connection between the AEBU mission and historical instances of Armenian women's groups, their advocacy, and their active involvement in promoting education and supporting students.

Afterwards, Mr. Hovagimian invited committee members Tatios Koroghlian, Lousine Boyamian and Karine Kojababian to present the 2023 Scholarship Awards to Sara Aprahamian, Sofia Gevorgian, Ani Hekimian, and Kathryn Sarkissian who attended the ceremony.

Aren Avetisian, Ani Mkrtchyan, and Joseph Tertzakian-Harris accepted their awards via video messages.

Award recipients in Armenia and Lebanon received their awards from the AEBU local chapters in Armenia and Lebanon.

The AEBU 2023-2024 Scholarship Fund award recipients are:

UNITED STATES OF AMERICA

Sara Aprahamian, Santa Clarita, California

Ms. Aprahamian is enrolled in the ArtCenter College of Design in Pasadena, and will be majoring in Entertainment Design: Concept Art. This is a domain where she has observed a noticeable lack of Armenian representation among concept artists. Ms. Aprahamian is a graduate of Saugus High School (GPA 3.91).

Sofia Gevorgian, Los Angeles, California

Ms. Gevorgian will be attending University of California, Los Angeles (UCLA) and majoring in Political Science, with a Minor in Middle Eastern Studies. Her long-term goal is to study law and pursue a career in the realm of international affairs. Ms. Gevorkian is a graduate of AGBU Manoogian-Demirdjian School, Canoga Park (GPA 3.95).

Ani Hekimian, Pasadena, California

Ms. Hekimian is attending Pasadena City College and majoring in Biochemistry. She has demonstrated exemplary engagement in community service by devoting her time in Armenian and non-Armenian volunteer activities. Ms. Hekimian is a graduate of Marshall Fundamental High School, Pasadena (GPA 3.83).

Kathryn Sarkissian, Whittier, California

Ms. Sarkissian is enrolled in the University of California, Los Angeles (UCLA) and will be majoring in Biology and minoring in Journalism. She will wield her love of writing and reporting to bringing attention to Armenian causes. Ms. Sarkissian is a graduate of the Armenian Mesrobian School in Pico Rivera (GPA 4.42).

Ani Mkrtchyan, Chevy Chase, Maryland

Ms. Mkrtchyan is enrolled in the University of Maryland, majoring in International Business and Marketing. She moved to the United States four years ago due to her father's military diplomatic term in Washington D.C. Ms. Mkrtchyan is a graduate of Bethesda-Chevy Chase High School in Maryland (GPA 3.88).

Aren Avetisyan, Chevy Chase, Maryland

Mr. Avetisyan will be studying Liberal Arts at St. John's College in Annapolis, Maryland. Aren was born in Stepanakert, Artsakh. He moved to the United States at the age of three, when his father was appointed to serve as Permanent Representative of Artsakh to the United States. Mr. Avetisyan is a graduate of Bethesda-Chevy Chase High School in Maryland (GPA 3.60).

Joseph Tertzakian-Harris, Alberta, Canada

Mr. Tertzakian-Harris is heading to the University of California, Berkeley, to study Middle Eastern Languages and Cultures with a double major in Ancient Greek and Roman Studies. He plans to devote his life to Armenian Studies and educating the public about Armenia through teaching and social media.

Mr. Tertzakian-Harris is a graduate of J.H. Picard High School in Edmonton, Alberta, Canada (GPA 4.0).

ARMENIA

Hagop George, Yerevan, Armenia
Newart Izmirlian, Yerevan
Anna Gharibyan, Lechashen
Nane Petrosyan, Lechashen

LEBANON

Dsovak Keuchkarian, Jal El Dib
Dalida Sharbarashian, Beirut
Noushig Zadigian, Bourj Hammoud.

Gerard Libaridian to Present New Book "Precarious Armenia" at NAASR



BELMONT, MA — The National Association for Armenian Studies and Research (NAASR) will present a hybrid (in-person and online) talk by Dr. Gerard J. Libaridian on Tuesday, September 12, 2023, at 7:30 p.m. (Eastern) / 4:30 pm (Pacific), in which he will discuss his new book "A Precarious Armenia: The Third Republic, the Karabakh Conflict, and Genocide Politics."

This program is presented as part of the NAASR / Calouste Gulbenkian Foundation Lecture Series on Contemporary Armenian Issues and will be held at the NAASR Vartan Gregorian Building, 395 Concord Ave., Belmont, MA. It is free and open to the public. Copies of A Precarious Armenia will be available for purchase and signing by the author.

The webinar will be accessible live on Zoom (registration required) and on NAASR's YouTube Channel. To register go to https://bit.ly/NAASR-Libaridian.

In his newest publication of selected essays and interviews, A Precarious Armenia (Gomidas Institute, 2023), Gerard J. Libaridian explores a number of fundamental issues regarding Armenia's foreign and security policies and scrutinizes the political culture as the framework within which positions have been defined and solutions have been sought.

The previously published and unpublished material analyzes the political thinking that characterized the response to challenges the Third Republic faced and failed to address from the standpoint of statehood versus a vague but powerful nationalism. Libaridian considers themes such as Armenia and Armenians as agents of their own history as opposed to the dominant sense of victimhood, maximalism confused with patriotism, the role of mediators and other states as saviors, and the comfort zone of illusions and legends as opposed to hard realism and pragmatism.

Dr. Gerard J. Libaridian served as senior adviser to the former President of Armenia, Levon Ter-Petrosyan and was the Director of Armenian Studies Program and held the Alex Manoogian Chair in Modern Armenian History at the University of Michigan. He is the author of numerous books including The Challenge of Statehood: Armenian Political Thinking since Independence (1999) and Modern Armenia: People, Nation, State (2007).

"Forbidden Homeland: Story of a Diasporan" With Katia Tavitian Karaguezian



FRESNO — Author Katia Tavitian Karaguezian will speak on her new book "Forbidden Homeland: Story of a Diasporan" at 7:00PM on Friday, September 8, 2023, in the University Business Center, Alice Peters Auditorium, on the Fresno State campus. The event is part of the Armenian Studies Program Fall 2023 Lecture Series.

In 1988, a single innocent comment made at her college in southern California leads Katia, a new immigrant, to the discovery of long-lost relatives she knew nothing about. These were descendants of her grandmother's siblings from whom she was separated because of the Genocide. As Katia decides to find answers to questions she had struggled with all her life, she uncovers stunning family secrets that ultimately lead to a decades-long search for something even bigger than her own identity.

"Forbidden Homeland immerses you in centuries of world-shaping history as its written pages become the rich landscape of a deeply personal journey…making you feel a part of it and reaching into your core. … In her riveting odyssey to find the missing pieces of her own identity, Karageuzian takes the reader with her to uncover hidden truths and connect past with present. She masterfully weaves her life's unexpected twists and turns, layered within stories of Armenian Genocide, Lebanese Civil War, immigration, and current world events, and paints a vivid, living mosaic of the unique and shared experiences of exile and resilience, loss and rebirth, discovering finally that even when forbidden our homeland, if we search, we will find home." – Ani Hovannisian Kevorkian, Filmmaker, The Hidden Map.

Katia Tavitian Karageuzian (Pharm.D.) was born in Beirut, Lebanon. In 1984, she immigrated to California with her family. In 1992, she received her doctorate in Pharmacy from the University of Southern California. She currently practices as a pediatric specialty pharmacist. Parallel to her career in pharmacy, when not spending time with family, Karageuzian paints, reads about history and politics, or volunteers with several nonprofit organizations. Karageuzian attributes her love of writing and reading to her childhood years growing up in war-torn Lebanon, where she often found refuge in books.

The reception and lecture are free and open to the public. Parking is available in Fresno State Lot P6, near the University Business Center, Fresno State. A parking pass is not required for the Friday evening presentation.

The presentation will also be livestreamed on YouTube at: https://bit.ly/armenianstudiesyoutube.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, https://fresnostate.edu/armenianstudies.

Macron: No Longer Time for Diplomacy,

Continued from page 1

Macron asserted.

When questioned about international experts characterizing the actions of Azerbaijan as genocide, Macron exercised caution in swiftly adopting such terminology. He acknowledged the intolerable humanitarian crisis, notably in the vicinity of the Lachin Corridor. Macron reiterated France's responsibility to uphold pressure for humanitarian access and assured that the country is fully committed to this endeavor. He specified that France continues to introduce initiatives to facilitate the transportation of food and medications to Nagorno-Karabakh and to maintain unrestricted access. Furthermore, he pointed out that the state borders of Armenia are presently under threat.

Azerbaijan Kidnaps 3 Artsakh Students

Continued from page 1

Beglaryan said he "cannot confirm" that Sargsian, Hovsepian and Grigorian played for that youth team based in the Karabakh town of Martuni. "All three of them are students of Armenian universities," he said.

In any case, added Beglaryan, the Azerbaijani allegations are "absurd" and aimed at intimidating Karabakh's ethnic Armenian population opposed to the restoration of Azerbaijani control over their region.

Hours following the kidnapping, Azerbaijan's Office of the Prosecutor General reported in a statement that "the criminal proceedings against the Armenian football players arrested at the Lachin border point has been halted."

Prosecutors have ordered a ten day administrative detention for the three young men, after which, according to the statement, the detained individuals will be expelled from Azerbaijan.

Standard & Poor's Upgrades

Continued from page 1

professionals. As such, the influx of skilled labor, coupled with the establishment of over 1,000 foreign-owned companies, has contributed significantly to the growth of sectors such as IT, which expanded by 51% in 2022 (the country's most productive sector).

'Significant financial inflows, particularly through money transfers from Russia, have also benefited Armenia's economy. Gross inflows of money transfers from Russia equated to 18.4% of Armenia's GDP in 2022, up from 6.2% in 2021. However, these transfers have begun to stabilize in recent months, which we expect to continue given that immigration flows have dissipated.

Migration from Russia has also boosted Armenia's catering, real estate, and transportation sectors. In 2022, Armenia received 1.67 million tourists, though this is still 14% below 2019 levels. That said, tourism remains strong, with a 79% increase in arrivals in the first quarter of 2023, compared with the same period last year. Despite the recent appreciation of the Armenian dram against the U.S. dollar reducing tourists' purchasing power, we expect tourism levels to remain robust.'

Financial inflows also resulted in a 22% appreciation of the Armenian dram against the U.S. dollar in 2022. This substantial currency appreciation has helped to shrink the government debt stock in U.S. dollar terms.

Հայութեան Հպարտանքներէն՝ Երաժշտահան, Երաժշտագէտ Պետրոս Շուժունեան

ՇԱՔԷ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Մոնթրէալաբնակ երաժշտագէտ, երաժշտահան փրոֆ. Պետրոս Շուժունեան մօտաւորապէս 50 տարի գործած ու ստեղծագործած է երաժշտութեան ոլորտին մէջ: Անոր հետաքրքրութեան առանցքը կազմած է նուագախմբային, դաշնամուրային, սենեկային եւ երգչախմբային երաժշտութիւնը: Եղած է դասախօս Քեպէքի «Universite du Quebec a Montreal» համալսարանին մէջ: 1987-1988 եղած է Մոնթրէալի միջազգային օփերային փառատօնի գեղարուեստական ղեկավարի օգնական, 1988-1990՝ Մոնթրէալի Մեթրոփոլիթէն նուագախումբի աշխատակազմի ղեկավար:

Պետրոս Շուժունեանի երկու մեծ հայրերը արմատներով եղած են Ատանացի: Հօրենական կողմը ունէր ջաղացք մը եւ իրենց կարած տոպրակներով ալիւր կը տարածէին շրջանին մէջ: Այդ տոպրակները կարելու ասեղին քրտերէնով կ'ըսեն «շուժուն», եւ այդպէս ալ իրենց մականունը եղած է Շուժունեան: Մեծ հայրը ջարդերէն յետոյ կը տեղափոխուի Հալէպ, ապա Լիբանան եւ առաջին ներգաղթին՝ 1946-ին, Հայաստան: Պետրոս Շուժունեանի հայրը ծնած է Գիւմրի, իսկ մայրը՝ Երեւան: Պետրոս Շուժունեան ծնած է 1957-ին, Գիւմրի: Ցաճախած է անգլիական թեքումով դպրոց: Վեց տարեկանին արդէն կը նուագէր ջութակ: 11 տարեկանին գրած է իր առաջին ստեղծագործութիւնը, որ մինչ օրս կը պահպանուի: Մինչեւ Գանատա մեկնիլը, 8-10 գործ գրած է՝ փոքրածաւալ ստեղծագործութիւններ ջութակի համար, սենեկային, քառեակ, երգչախմբային ստեղծագործութիւն Նարեկացիի «Մատեան ողբերգութիւն»-էն: Աւարտած է Կոմիտասի անուան երաժշտական դպրոցը, ապա ընդունուած է Կարա-Մուրզայի անուան երաժշտական ուսումնարանը՝ ստեղծագործութեան եւ ջութակի դասարան, որուն ուսումնական 3-րդ տարին, 1976-ին, արդէն 18 տարեկան էր, երբ կը մեկնի Գանատա: 1972-1976 մաս կազմած է Գիւմրիի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասին:

1976-ին Պետրոս Շուժունեան կ'ընդունուի «Conservatoire de musique du Quebec» եւ կ'ուսանի գանատացի հանրածանօթ երգահան Ժիլ Թրամպլէյի (Gilles Tremblay) դասարանը՝ ստանալով երաժշտութեան մագիստրոսի աստիճան 1982-ին:

Երգահան Պետրոս Շուժունեան սկսած է ստեղծագործել կանուխ երիտասարդ տարիներուն: Փորձառութիւն ձեռք բերած է հայկական երգչախմբային երաժշտութեան մէջ: Ան հեղինակ է աւելի քան 100 ստեղծագործութիւններու, այդ շարքին՝ «Արարատ պոէմ» սիմֆոնիքը, «Կոմիտասին», «Սայաթ-Նովա» հարուածային համերգային փունջը, 4 լարային քառեակ՝ ներշնչուած հայ շարականներէ, «Մաշտոց» զոյգ դաշնամուրային գործը, «Երեք մինիաթիւր« (Three pieces of ancient Armenian liturgical music) գրուած լարային քառեակի համար եւ այլն: Իր ստեղծագործութիւնները կատարուած են գանատական նուագախումբերու կողմէ, հնչած են ձայնասփիւռներէն եւ հրատարակուած են տարբեր տեղեր:

Գանատայի հայ համայնքէն ներս Փրոֆ. Պետրոս Շուժունեան ունեցած է իր ներդրումը: Ղեկավարած է Մոնթրէալի երկու հայկական երգչախմբեր՝ Համազգայինի «Քնար» երգչախումբը (1976-1991) եւ Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ «Ալէմշահ» երգչախումբը (1985-1996): Ցիշեալ տարիներուն սոյն երգչախումբերուն հետ ձայնագրած եւ հրատարակած է հայ երաժշտահաններու ստեղծագործութիւններու արձանագրութիւնները, գրառումները եւ Սուրբ Պատարագը: Նշենք նաեւ, որ ան պաշտօնավարած է Մոնթրէալի հայկական վարժարաններէն ներս որպէս երաժշտութեան դասախօս՝ 1976-1985 Սուրբ Յակոբ Վարժարանին մէջ եւ 1985-1988՝ Նարեկ Վարժարանին մէջ:

Որպէս հաստատուած գանատացի երաժշտահան, Շուժունեան տարիներու ընթացքին աշխատած է բազմաթիւ նուագախումբերու հետ, ինչպէս՝ I Musici de Montreal, NEM, Kitchener, London (Ontario), Laval, եւ Marie-Josee Simard, Pierre Jasmin, Jean Laurendea եւ այլ մենեղգիչներու:

1997-ին Label: SNE (Societe Nouvelle d'Enregistrement) կը հրատարակէ ձայնասկաւառակ մը, ուր կը ներկայացուին Պետրոս Շուժունեանի գործերը. սկաւառակը 1999 թուականին Լոս Անճելըսի «AMFA»-ի կողմէ կ'արժանանայ Best Modern International Award-ին:

Փրոֆ. Պետրոս Շուժունեանի The Oratorio Sourp Khatch յայտնի ստեղծագործութեան, նուիրուած՝ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան 1700-ամեակին, առաջին ներկայացումը տեղի կ'ունենայ 2001-ին, Թորոնթոյի մէջ, Elmer Iseler Singers- ի եւ Sinfonia Toronto- ի հետ, ղեկավարութեամբ՝ Նուրհան Արմանի: Նոյն առիթով Փրոֆ. Պետրոս Շուժունեան կը դաշնաւորէ եւ կը համակարգէ գործիքաւորումը հայկական հոգեւոր երաժշտութեան՝ սենեկային նուագախումբի երգչախումբին եւ սոփրանոյի մեներգներու, ինչպէս՝ CBC- ի (The Canadian Broadcasting Corporation) համար: Ան Իզապէլ Պայրաքտարեանի հետ կը թողարկէ JOYOUS LIGHT (ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ) սկաւառակը, որ կը ղեկավարէր խմբավար Ռաֆֆի Արմէնեան:

2015-ին, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին, եւ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու նպատակով այս ողբերգութեան վրայ, երգահան, փրոֆ. Պետրոս Շուժունեան կը գրէ չորս լարային քառեակներ, բոլորը՝ հիմնուած հայկական շարականներու վրայ:

Փրոֆ. Պետրոս Շուժունեան 2010 թուականին կը սկսի գրել Մեծ Եղեռնի 100-ամեակին նուիրուած «Պատարագ եւ Հոգեհանգիստ 2015»: Եզակի իր ծաւալով եւ տարողութեամբ այս ստեղծագործութիւնը, 11 Ապրիլ 2015-ին, կը ներկայացնէ օտարազգի անդամներով կազմուած Chœur St-Laurent երգչախումբը եւ չորս մեներգիչներ, որոնցմէ միայն երեքը հայ են՝ Սաշա Ճիհանեան (Sasha Djihanian, soprano), Marie-Annick Bœliveau, mezzo-soprano, Էլի Պէրպէրեան (Elie Berberian, tenor), Վարդան Գաբրիէլեան (Vartan Gabrielian, basse), ղեկավարութեամբ՝ Philippe Bourque-ի: «Պատարագ եւ Հոգեհանգիստ 2015» ստեղծագործութիւնը առաջին անգամ կը հեռարձակուի www.sourphagop.net կայքէջով, 12 Սեպտեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 7:30-ին: Նոյն ստեղծագործութիւնը կը սփռուի նոյն օրը ռատիօ Այգի ուղիղ եթերով (ծանուցումը եւ պատկերը այստեղ՝ https://www.facebook.com/radioayk/photos/a.168204529927876/882472015167787)

2019-ին, Կոմիտասի ծննդեան 150-ամեակին ընդառաջ երաժշտահան փրոֆ. Պետրոս Շուժունեան Մարտի 27-ին Գանատայի մէջ կը նախաձեռնէ մեծածաւալ համերգ մը: Հարկ է նշել, որ այս մեծ ծրագիրի ետին կանգնած էին երկու կազմակերպութիւններ՝ Մոնթրէալի Անթիլիասի թեմի առաջնորդարանը, յանձինս Արժպ. Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյունեանի, որ այն հոգեւորականներէն է, որ կը հաւատայ մշակոյթի ուժին եւ կ'ընէ անկարելին Մոնթրէալի մէջ, եւ Լաւալի սիմֆոնիկ նուագախումբը՝ ղեկավարութեամբ տաղանդաւոր խմբավար Ալէն Թրուդելի եւ մասնակցութեամբ դաշնակահարուհի Լուիզ Պեսսեթի. վերջինս կը համարուի գանատացի այն դաշնակահարներէն, որ ճանչցուած է որպէս ժամանակակից երաժշտութեան լաւագոյն մեկնաբանողներէն մէկը:

Հարկ է նշել նաեւ, որ նոյն տարին Փարիզի մէջ եւ առաջին անգամ Կոմիտասի 150-ամեակին նուիրուած մշակութային եւ համերգային ծրագիր մը կ'իրականացուի «Կոմիտասն ու ֆրանսացի իր ժամանակակիցները» խորագրին տակ. Կը հնչեն Քլոտ Տէպիւսէի եւ Մորիս Ռավէլի արուեստը Մեծն Կոմիտասի ստեղծագործութիւններուն զուգահեռ, Սեպտեմբեր 28-ին, Փարիզի «La Madeleine» տաճարին մէջ, նոյնանուն հրապարակին վրայ, հովանաւորութեամբ Փարիզի քաղաքապետուհի Anne Hidalgo-ի եւ կատարողութեամբ «Ensemble 2e2 m» ֆրանսական դասական նուագախմբին: Համերգի ընթացքին կը հնչեն երաժշտահան փրոֆ. Պետրոս Շուժունեանի իրագործած կոմիտասեան եւ ֆրանսական յօրինումներու երաժշտական մշակումներն ու գործիքաւորումները:

Փրոֆ. Պետրոս Շուժունեան ներկայիս Մոնթրեալի երգահաններու միութեան անդամ է: Անոր ստեղծագործութիւններուն առաւել մանրամասն կարելի է ծանօթանալ այցելելով կայքէջը՝ http://www.musicaunica.com եւ իր facebook-ի էջը՝ https://www.facebook.com/shoujounian:

«Տարբերակ21»

Շ Ն Ո Ր Հ Ա Ն Դ Է Ս

Հովանաւորութեամբ՝
Հայ Առաքելական եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ
Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի

Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութիւնը ներկայացնում է՝
Արձակագիր Ռուբէն Կորիւնի (Ռուբէն Ս. Քեշիշեան)
վերջին չորս գրքերի՝
1-Կեանքի առաքինութեան ճառագումը
2-Կեանքի ոլորտներում
3-Մի բուռ պատկերներ
4-Հանապազ դու իմ սրտում ես

Բացման խօսք՝ Հայկ Մադոյեան
Գրքերի արժեւորում կը կատարի՝
Գրող-իրաւաբան՝ Հակոբ Մկրտչեան
Հանդիսավար՝ Գրող Կիմա Կիրակոսեան
Ողջոյնի խօսքեր
Գեղարուեստական բաժին
Հիւրասիրութիւն

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 19 Սեպտեմբեր 2023, երեկոյեան ժամի 7-ին
Սրբոց Ղեւոնդեաց Մայր տաճարի՝ «Արմէն եւ Կլորիա Համբար» սրահում
Հասցէ՝ 3325 N. Glenoaks Blvd. Burbank, CA 91504
Մուտքն ազատ է

Բացառիկ Համերգ Լարքում՝ Սոպրանօ Շուշիկ Պարսումեան

Շուշիկ Պարսումեան եւ Սթիվըն Վանհաուերթ

ԿԱՐԻՆԷ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ

Այսօր պիտի սկսենք աւանդական ձեւով. Ուրբաթ, Օգոստոսի 18-ին, 2023 թ., երեկոյեան ժամը 7-ին, Լարքի կրթամշակութային կենտրոնի Էօժէնի եւ Գէորգ Քէշիշեան համերգասրահում տեղի ունեցաւ մի համերգ: Մենակատարն էր հայազգի սոպրանօ երգչուհի Շուշիկ Պարսումեանը, ում դաշնամուրով նուագակցում էր Եութայի համալսարանի երաժշտութեան բաժնի պրոֆեսորի պաշտօնակատար Սթիվըն Վանհաուերթը:

Լարքի կողմից պատրաստուել էր գեղեցիկ մի բրոշիւր, ուր կար ամէն մի մանրամասնութիւն՝ համերգի ծրագիրը, Թագուհի Արզումանեանի ներածական խօսքը, կատարուող երգերի բնագրերն իրենց անգլերէն թարգմանութիւններով, կոմպոզիտորների մեծագիր նկարները, մասնակից արուեստագէտների ստեղծագործական կեանքն ու գործունէութիւնը: Նաեւ կար Լարքի շնորհակալական խօսքը համալիրում գործող Մշակութային թեւաշէնքի բարերարներին՝ իրենց անուններով, եւ յիշուած էին այն բոլոր ձեռնարկները, որ տեղի էին ունեցել Նորակառոյց սրահում, 2023 թուականի փետրուարից սկսեալ. դրանք թուով 20 հատ էին:

Պատկերացնո՞ւմ էք, թէ ինչ է նշանակում այս. Գլենդելի մի փոքրիկ հողակտորի վրայ, երկյարկանի շէնքում տեղաւորուել է մի հաստատութիւն, որ 6 ամիսների ընթացքում ներկայացրել է 20 ելոյթներ՝ կատարողական գործիքների, թատրոնի, պարի, ասմունքի, շրջանաւարտների, ու այդ բոլորն այդ օրը եզրափակւում էր փառաւոր համերգով՝ Շուշիկի մենահամերգը: Յաջորդ օրն իսկ սկսւում էր Լարք երաժշտանոցի նոր ուսումնական տարին՝ 2023-2024:

Համերգն սկսուեց Թագուհի Արզումանեանի բացման խօսքով: Ապա մեզ ներկայացան հետեւեալ կոմպոզիտորները՝ Պիեր Ադոլֆօ Տիրինդելլի, Ռիխարդ Շտրաուս, Տիգրան Մանսուրեան, Ռոմանոս Մելիքեան, Գուրգէն Ալեմշահ, Կոմիտաս, Գեղունի Զթչեան: Հայ կոմպոզիտորները ներկայացուած էին երկու գործերով:

Բազմիցս անդրադարձել ենք Շուշիկ Պարսումեանի ելոյթներին. նրա շրջանաւարտութեան համերգը Հարաւային Քալիֆորնիայի համալսարանում, Լարքի կազմակերպած բազմաթիւ համերգներում, օպերաների եւ օպերետների գլխաւոր հերոսուհիների մարմնաւորումը, առաւել՝ նրա մասնակցութիւնը իր ապրած եւրոպական երկրների երաժշտական խմբերի ելոյթներում:

Այդ օրը նա Լարքում էր: Համերգի ծրագրի գրքոյկում եղած Շուշիկ Պարսումեանի նկարի ետեւում զարմանալիօրէն յայտնուել էր Վաչէ Պարսումեանը: Պատահական չէր այս համադրութիւնը: Տարիներով՝ Գեղարուեստական երգի ներկայացման սկզբունքներ մշակած Վաչէն իր նկատառումները փոխանցել էր Շուշիկին, եւ մենք ունկնդրելու էինք այդ երգերի նորովի կատարումները՝ բոլորովին տարբեր մեկնաբանութիւններով:

Գրքոյկի ներածականում նշւում էր. «Գեղարուեստական երգի պոէզիան նպատակ ունի համառօտ խօսքով ներկայացնել հոգեվիճակ, իսկ երաժշտութիւնը հետեւում է բառերին գերագոյն հաւատարմութեամբ»:

Երբ լսում էինք երգչուհուն, զգում էինք այն բազմաշերտ վերլուծութիւնները, որ փոխանցուել էին Շուշիկին, եւ նա կարողանում էր արմատապէս համոզել ունկնդրին՝ երգերի կերպարների բացայայտման առումով: Վաչէն ասել էր. «Երգերու կերպարները այնպէս պիտի ստեղծես, կարծես եթէ ձեռքդ երկարես, պիտի կարենաս բռնել զայն»: Պարսումեան երգչուհին՝ արդէն իր կատարողական հմտութեամբ, լեզուական իմացութեամբ, բեմական վարպետութեամբ դրանք տեղաւորելով ճոխ մի սկուտեղի վրայ, ներկաներին հրամցնում էր այդ, եւ բոլորս ըմբոշխնում էինք այն:

Հիմնական շեշտը դրուած էր բանաստեղծական խօսքի իմաստը կարեւորելուն, որն աւելի պիտի ամբողջանար մեղեդիով եւ դաշնամուրի հաւատարիմ նուագակցութեամբ: Ուրիշ բան, որ այդ նուագակցութիւնները որոշ ստեղծագործութիւններում մեր սրտին մօտ էին, իսկ այլոց մէջ՝ չսպասուած անակնկալներ: Ահա այս պարագաներում է, որ խօսքի յստակ ըմբռնման կարեւորութիւնը մեզ կապում էր այդ անակնկալներին, եւ մենք կարողանում էինք ընկալել կերպարը:

Գեղարուեստական երգի նորարութիւնները կարող էին կերպարանաւորուել միմիայն բարձր արհեստավարժ մակարդակի կատարման առկայութեամբ, որ երգչուհի Պարսումեանի մօտ ապահովուած էր ամբողջութեամբ:

Իտալացի Տիրինդելլին եւ գերմանացի Շտրաուսը երգում էին իրենց բնագրերով: Ապա յաջորդում էին՝ մերոնք: Զարենցին եւ Իսահակեանին կերպարանաւորել էր Մանսուրեանն իր ոգեղէն, հայկական երաժշտութեան ընդերքներից բխող սովորոյթների նորովի դրսեւորումներով, եւ Շուշիկը կարողանում էր ցոյց տալ «իջնող տագնապը մութի», նաեւ՝ պատկերել «հէք գլխին շառաչող հողմերը»:

Ռոմանոս Մելիքեանի «Գիշերն եկաւ»-ից յետոյ (խօսք՝ Գ. Քեալաշեանի) հնչում էր փառայեղ «Շափաղ կու տաս»-ը (խօսք՝ Աւ. Իսահակեանի) Շուշիկ Պարսումեանի նոյնքան փառայեղ մեկնաբանութեամբ. երգչուհին տալիս էր «շափաղի» այն փայլքը, որ տարածւում էր «բաղի մէջին», այս պարագային՝ ողողելով գողտրիկ համերգասրահը:

Գուրգէն Ալեմշահի «Ես սիրեցի»-ն՝ գրուած Վահան Թէքէեանի համանուն բանաստեղծութեան վրայ, մի սիրազեղուն ներդաշնակութիւն էր երաժշտութեան հետ, եւ երգչուհին ուղղակի բեմադրում էր այն: «Իղձ» երգի բանաստեղծութիւնը պատկանում էր Արշակ Չօպանեանին, հայ առաջին գրականագէտներից, որ Գրիգոր Նարեկացու ժառանգութիւնը վերլուծել էր որպէս գեղարուեստական ստեղծագործութիւն եւ նրան դրել էր համաշխարհային հսկաների կողքին: Եւ Շուշիկը Չօպանեան-Ալեմշահ սինթեզը ներկայացնում էր մեզ՝ իր ստորագրութեամբ: Երբեմն զարմանում ես. ապրում ենք, առանց գիտակցելու, թէ մեր աչքերի առջեւ կերտւում է մեր մշակոյթի պատմութեան շարունակութիւնը, մեր ազգային աւանդների պահպանմամբ եւ զարգացմամբ, իսկ մենք սովորական, առանց զգալու դրա յոյժ կարեւորութիւնը, դիտում եւ անցնում ենք, երբեմն միայն վաւերագրելով այդ անցուդարձը:

Հասնում ենք մեծն Կոմիտասին: Շուշիկ Պարսումեանը բազմիցս հանդէս էր եկել Կոմիտասեան ելոյթներով: Ու ամէն անգամ դրանք ներկայացել են տարբեր խորութեամբ, միշտ աւելի հասունացած, յղկուած, իւրաքանչիւր անգամ նոր երանգաւորումով: Այստեղ արդէն չկան խօսքի եւ երաժշտութեան տարբեր հեղինակներ: Կոմիտասն ինքն է, հայ ռամիկն է, որ Կոմիտասով ամրագրուել է որպէս գեղարուեստական երգ: «Ալագեազ բարձր սարին», «Ես սարէն կու գայի» զոյգ երգերը հոգեհարազատ էին, ինչպէս միշտ:

Համերգի եզրափակիչ համարներն էին Գեղունի Զթչեանի «Մանուշակին« եւ «Արարատ» երգերը, Յովհաննես Շիրազի համանուն բանաստեղծութիւններով: Անշուշտ որ Լարք երաժշտանոցի որեւէ ներկայացում, լինի դա աշակերտական ամենափոքրիկ ելոյթ կամ աշխարհահռչակ երաժիշտների համար կազմակերպած բեմական մեծ համերգ, պիտի եզրափակուեն հայութեան խորհրդանիշներով: Այդ օրուանն էին՝ հայրենիքի սէրը եւ Արարատ լեռը. ըստ Շիրազի՝ մանուշակը չպիտի պոկուէր իր մայր հողից եւ դեռ երազ էր «այսքան մօտիկ եւ այսքան հեռու Արարատ լեռը»:

Առանց ընդմիջման ընթացող համերգը՝ անընդհատ փոփոխուող պատկերների յաջորդականութեամբ, երգչուհի Շուշիկ Պարսումեանը կարողանում էր պահել նոյն գծի վրայ, ինչին օգնում էր նրա արագ կերպարանափոխումը մէկ երգից միւսը, որ ունկնդրին մղում էր միշտ ունենալու հետաքրքրուածութիւնը յաջորդի նկատմամբ, եւ՝ դարձեալ յաջորդի: Ունկնդիրների բուռն ծափերի տարափը պարտադրեց երգչուհուն կատարել մէկ համար եւս՝ իտալացի Տիրինդելլիի երգը: Դաշնակահար Սթիվըն Վանհաուերթի անթերի նուագակցութիւնը համերգի յաջողութեան ամուր պատուանդանն էր, մանաւանդ հայկական երաժշտութեան հասկացողութեամբ եւ ըմբռնմամբ:

Աւարտուել էր համերգը:

Նորակառոյց սրահի բազմաթիւ հանդիսատեսները փոխադրուում էին Լարքի համալիրի Թրպանճեան սրահ՝ հիւրասիրութեան եւ խորհրդածութեան իրար հետ, շարունակելով մտածելու այն մեծ վայելքի մասին, որ տրուած էր ներկաներին:

Հանգիստ էինք, քանի որ դեռ կենդանի է հայ մշակոյթը՝ այն ստեղծողը, ներկայացնողը եւ գնահատողը:

Գիւմրիում Բացուեց Ճափոնացի Արուեստագէտ Այումի Ադաչիի «Գիծ - Մուսուբու» Ստեղծագործութեան Ցուցահանդէսը

Գիւմրու «Մարիամ եւ Երանուհի Ասլամազեան քոյրերի պատկերասրահ»-ում բացուել է ճափոնացի արուեստագէտ Այումի Ադաչիի «Գիծ - մուսուբու» ստեղծագործութեան ցուցահանդէսը: Ինչպէս տեղեկացնում է «Արմենպրես»-ը, ցուցադրութիւնը կեանքի է կոչուել «Արտ բազիս» արուեստային նախաձեռնութեան շնորհիւ՝ Գիւմրի AIR ծրագրի շրջանակում:

Այումի Ադաչիի «Գիծ - մուսուբու» ստեղծագործութիւնը ծնուել է արուեստագէտի՝ Գիւմրիում ապրելու ընթացքում:

«Ես մտածում եմ, որ արուեստի գործերը պէտք է կատարեալ շրջանառութեան մէջ լինեն բնութեան մէջ, ինչպէս միւս նիւթերը: Սա գոյութիւն ունեցող «Գիծ - սեթսունա ??» գործում նիւթերի ուսումնասիրութեան արդիւնք է եւ այն փոխակերպուել է 2018 թուականից ի վեր թղթի վրայ իմ երկարատեւ գործընթացից եւ լայնածաւալ ինստալացիաների շարքից: Հիմնական թեման մնում է նոյնը: Տեղին յատուկ ինստալացիան սեւ գծեր նկարելուց վերածուել է բամպակեայ սեւ պարանի: Նուրբ պտոյտներով սեւ բամպակեայ թելը Քսանայի խորհրդանիշն է, սանկրիտից բառ, որը ցոյց է տալիս «մատից աւելի կարճ» ժամանակի միաւորը եւ ամբողջ լուսաւորութիւնը, որը տեղի է ունենում Քսանայի տարածքում, որը խուսափում է մեր անգիտակից մտքերից: Սեւ բամպակեայ թելը, որը տարածւում է տարածութեան մէջ, հանդիսատեսին սուզում է «Զգողականութիւն» ընդհանուր իմացութեան հրաշքների մէջ: Իմ ստեղ-

Շար.ը էջ 14

Քոմպոզիտոր Հայկոյի Ստեղծագործութիւններն Առաջին Անգամ Հնչեցին Սիմֆոնիկ Կատարմամբ

ՏԱԹԵՒԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Սիմֆոնիկ Հայկո». այս խորագիրն ունէր Օգոստոսի 25-ին ՀՀ վաստակաւոր արտիստ Հայկ Յակոբեանի 50-ամեայ յոբելեանին նուիրուած համերգային յաղեցած ծրագիրը:

Երկրորդ տարին է՝ երգչի, երգահանի ծննդեան օրը ընկերները, երկրպագուները, հարազատներն առանց նրա են համախմբւում իր երգարուեստի շուրջ՝ յիշելով, մեծարելով կեանքից վաղաժամ հեռացած արտիստին:

Ազդարարելով սպասուած հանդիսաւոր երեկոյի մեկնարկը Աւետ Բարսեղեանն ու Խորէն Լեւոնեանը շնորհաւորեցին ընկերոջը, պարբերաբար անդրադառնալով նրա մասնագիտական եւ մարդկային բարձր յատկանիշներին, բնորոշելով որպէս 21-րդ դարի ականաւոր հայ կոմպոզիտոր:

Համերգի գլխաւոր ուղերձներից էր՝ արժանիներին կեանքի օրօք գնահատելու, մեծարելու, արժանին մատուցելու կարեւորութիւնը:

Սիմֆոնիկ տարբերակով ստեղծագործութիւնները ներկայացնելը Հայկոյի երազանքն էր. մեծ էկրան, նուագախումբ, կադրեր ֆիլմերից. այս ամէնը թիմային աշխատանքի շնորհիւ իրականութիւն դարձաւ Օգոստոսի 25-ին Ա. Սպենդիարեանի անուան Օպերայի եւ Բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի (իտալացի անուանի դիրիժոր Ջանլուկա Մարչիանոյի ղեկավարութեամբ), երգարուեստի ներկայացուցիչների, անուանի երաժիշտների, ինչպէս նաեւ Ազգային ակադեմիական երգչախմբի (գեղարուեստական ղեկավար Հայաստանի ազգային հերոս Յովհաննէս Ջեքիճեան) կատարումները նոր շունչ, մշակում, բառերով դժուար փոխանցուող յուզական էներգետիկա ունէին:

Ապրած հինգ տասնամեակի գերակշիռ մասը Հայկոն նուիրեց երաժշտարուեստին՝ ստեղծելով չհնացող, մարդկանց հոգու եւ սրտի նուրբ անկիւններին դիպչող երգեր:

Թախիծ ու միաժամանակ խորը, լուսաւոր ակնածանք սիրոյ երգչի անաւարտ թողած գործունէութեան եւ կեանքի համար:

Իւրաքանչիւր երգ պատմութիւն է, հեղինակի տարբեր տարիներին գրուած յուզական ապրումների նոտայական դրսեւորում:

Կազմակերպիչները՝ ի դէմս 2022 թուականին ստեղծուած «Հայկո Յակոբեան մշակութային հիմնադրամ»-ի, ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան, Երեւանի քաղաքապետարանի, այլ գործընկերների փորձեցին կեանքի կոչել Հայկոյի երազանքը, որը նրա եւ Սիմֆոնիկ նուագախմբի հիմնադիր-ղեկավար, դիրիժոր, Սերգեյ Սմբատեանի համատեղ գաղափարն էր:

Շուրջ երկու ժամ տեւողութեամբ համերգը Հայկոյի կախարդական երաժշտական աշխարհով ճամբորդելու հնարաւորութիւն էր էկրանից նաեւ ինքը յօբելեարն էր զրուցում ներկաների հետ՝ արխիւային տեսանիւթերից հատուածներով, խորիմաստ մէջբերումներով ու իր ձայնային տեմբրի տարբերուող կատարումներով, ժպիտով:

Հայրենական արտադրութեան կինոֆիլմերի երաժշտութեան վերջին տարիների գլխաւոր հեղինակը հնչում էր սիմֆոնիկ մշակմամբ առաջին անգամ, ընկալելի, զուսպ, մեղեդային:

Ինչպէս եւ հաղորդավարները փաստեցին, Հայկոյի աշխատանքները անցել են ժամանակի ստուգատեսը: Նրա երգերը բացառապէս սիրոյ մասին էին ու պատահական չէ, որ Հայկոն սիրում էր բոլորին, իր դրական, ջերմ հետքը թողնելով գրուած երաժշտութեան մէջ, մարդկանց յիշողութիւններում:

Առաջին անգամ Հայկ Յակոբեանի ստեղծագործութիւններից երկուսը հնչեցին Թաւջութակահար, ՀՀ վաստակաւոր արտիստ Նարեկ Հախնազարեանի նուագակցութեամբ:

Ծրագիրը մեկնարկեց սիրուած «Վերեւ» երգով, եզրափակուեց Հայկոյի երաժշտութեամբ «Անատոլիական պատմութիւն» ֆիլմի սաունդթրեքով, այնուհետեւ Երեւանին նուիրուած կատարմամբ:

Միայն յօբելեանական համերգով սակայն չամփոփուեց Օգոստոսի 25-ը: Հեռուստաէկրաններից եւս իր ծննդեան օրը Հայկոն էր՝ տարբեր տարիների մենահամերգներով, հեռուստահաղորդումներով:

Սիրոյ երգիչը 2012 թուականին հարցազրոյց էր տուել «Արմենպրես»-ին, յաջորդիւ իր ծրագրերի ու նախաձեռնութիւնների մասին յաճախ էր առաջինը հենց գործակալութեան միջոցով պատմում հանրութեանը:

Ուղիղ մէկ տարի առաջ «Հայկո Յակոբեան մշակութային հիմնադրամ»-ի նախաձեռնութեամբ Հայկոյի յիշատակին նուիրուած առաջին՝ «Սէրը սիրուց յետոյ՝ կարօտով...» համերգային ծրագրին կրկին անդրադարձել էինք՝ կոմպոզիտորի ստեղծագործութիւններն ու թողած երաժշտական ժառանգութիւնը գնահատելու, արժեւորելու մեծ ցանկութեամբ:



Մենք Ապրում Ենք Եւ Ապրեցնում...

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցության Արցախի Թիմը Պատանիների եւ Երիտասարդների Ցերեկային Ճամբար է Անցկացնում

ՎԻՔԹՈՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ,
ԱՀԱԸ-ի Արցախի
Ներկայացուցիչ

Արցախում կեանքը այլ է, այստեղ ապրելու համար պէտք է ինքդ դառնաս կողքինների համար յենարան, ինքդ պէտք է կեանք փոխանցես, ինքդ պէտք է պայքարես եւ չթուլանաս... անորոշութիւն, քաոս, յուսահատութիւն: Թւում է, թէ էլ երբեք հայրենիքիդ համար գարուններ չեն գալու...

Դժուար է այս ամէնի մէջ ապրող երիտասարդ սերնդի հետ աշխատել եւ փոխանցել յոյս, առաւել դժուար է ցոյց տալ առաքելութեան իր բաժինը:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) հերթական անգամ իր շուրջը համախմբեց բազում պատանիների եւ երիտասարդների, որպէսզի քաջալերի, յոյս տայ եւ սովորեցնի, որ հայրենիքի կերտման համար իւրաքանչիւրս անելիք ունենք...

Մենք պէտք է սովորենք մտքով, սրտով, հոգով եւ մեր ապրած կեանքով առողջ լինել, որպէսզի կարողանանք նոյնը փոխանցել:

Օգոստոս 14-18-ի օրերին տեղի ունեցող հերթական ճամբարը, որը յագեցած էր ժամանցային, կրթական, հայրենասիրական բաժիններով, երեխաներին կտրեց առօրեայ հոգսերից եւ շրջափակումից:

Մենք պէտք է սովորենք միասին, իրար հետ, միմիանց օգնելով եւ վեր բարձրացնելով յաղթահարենք այս դժուարութիւնները...

«Այս ոգիով եւ այս դիրքով պիտի փշրին բռնակալին բոլոր շղթաները» ըսաւ ԱՀԱԸ-ի Գործադիր Տնօրէն Զաւէն Խանճեան: «Հերոսական ընդդիմադրութիւնն է որ պիտի փրկէ հայրենիքը եւ ոչ ողորմող արտաքին ձեռքերը: Ձեր կողքին ենք հաստատօրէն, անկոտրում կամքով բայց կը նսեմանանք ձեր հերոսական պայքարին դիմաց: Կը գնահատենք, կը սիրենք, կը միանանք ձեր պայքարին եւ կը խոնարհինք ձեր առջեւ»:

Նշուեցաւ ՀԿԲՄ-ի Կրթանպաստներու Յանձնախումբի 5-Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

ւիրեց քանոնահար եւ երգչուհի՝ Նեկտարին Զիլեան, որ իր հրաշալի կատարումներով հմայեց ներկաները:

Ճաշի սպասարկումէն ետք ելոյթ ունեցաւ օրուան գլխաւոր բանախօս՝ «UC Irvine» Համալսարանի Հայկական Ուսմանց Կեդրոնի դասախօս՝ Փրոֆ. Հուրի Պէրպէրեանը: Ան իր ելոյթին մէջ պատմական ակնարկ մը նետեց 19-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ ծնուած առած Հայ կանանց կազմակերպութիւններուն մասին, որոնց հիմնական նպատակը եղած է ուսման միջոցաւ զարգացնել իգական սեռի ներգրաւումը հասարակական կեանքէն ներս:

Ան իր խօսքին մէջ կարեւորեց ՀԿԲՄ-ի եւ Հայկական այլ կազմակերպութիւններու կարեւորութիւնը մեր ազգային կեանքէն ներս:

Բանախօսի ելոյթէն ետք տեղի ունեցաւ կրթանպաստներու յանձնման արարողութիւնը՝ ձեռամբ Յանձնախումբի անդամներ՝ Թադէոս Քորողլեանի, Լուսին Պոյամեանի եւ Կարինէ Գոճապաշեանի:

Նաւասարդեան Խաղերը Մեծ Ոգեորութիւն Ստեղծեցին Գնալը Կղզիին Մէջ

Պոլսոյ «Մարմարա» թերթէն կ՝իմանանք թէ «Լոյս Մեդիա»ն աւանդական շունչ տուած է Նաւասարդեան ամառնային փառատօնին: Այս տարի փառատօնն իրականութիւն դարձաւ անցեալ շաբաթավերջին՝ 25,26, եւ 27 Օգոստոսին, դարձեալ որպէս ժամադրավայր ունենալով Գնալը կղզին եւ վայելելով Երիտասարդութեան եւ մարմնամարզութեան Նախարարութեան գլխաւոր օժանդակութիւնը: Երեք օր շարունակ, իշխանաց կղզիներէն մարզիկներ, անհատական կամ թիմային մրցաշարքերով մասնակցեցան զանազան, մարզաձեւերու մէջ՝ ֆուտպոլ, պասքեթպոլ, լող, թէնիս, ճատրակ եւ նարտի:

Բացի մրցումներէն՝ կազմակերպիչները համերգներով, ելոյթներով ու զանազան այլ միջոցառումներով, համախմբեցին երիտասարդները եւ մարզանքի խանդավառ ոյժով ոգեւորեցին զանոնք:

Եռօրեայ փառատօնի բացումը կատարուեցաւ Ուրբաթ իրիկուն, նաեւ Շաբաթ եւ Կիրակի օրերը կայացան մրցումները: Կիրակի երեկոյեան՝ Նաւասարդեան խաղերն իրենց աւարտին հասան հանդիսաւոր պայմաններու մէջ, ներկայութեամբ օրուան հովանաւոր Թուրքիոյ Հայոց Պատրիարք Հօր: Բացումը կատարուեցաւ Արի Պարութօղլուի կատարումներով ու «Մարալ» երգի ու պարի համոյթի ելոյթով: Փակման գլխաւոր հիւրը դարձաւ հանրայայտ երգչուհի Հանտէ Եէնէր, որ բեմ ելաւ մետալներու տուչութենէն ետք:

Իսկ գալով Նաւասարդեան խաղերուն՝ բացման արարողութիւնը կայացաւ «Հրանդ Պարսամեան-» մարզադաշտին վրայ: Հանդիսութիւնը պատուեց Նորին Ամենապատուութիւն Պատրիարք Հայրը: Ներկայ էին նաեւ Թուրքիոյ Խորհրդարանի հայ երեսփոխան Տոքթ. Սեւան Սվաճըօղլու, կղզիներու Թաղային Խորհուրդի ատենապետ՝ Լեւոն Շարեան եւ այլ անձնաւորութիւններ:

Ոգեւորութիւնը տիրական էր. դաշտին մէջ գետեղուած էր մեծ բեմ մը որ պատրաստուած էր թէ հանդիսութեան եւ թէ խաղերու համար: Պատրիարք Հայրը իր ելոյթին մէջ գնահատեց կազմակերպիչներու ջանքերը եւ ըսաւ որ ուրախութիւն էր տարբեր տարիքներէ բազմահարիւր անձերու համախմբումը Գնալը կղզիի մարզադաշտին մէջ:

Այս առթիւ պատրիարք հայրը հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց նաւասարդեան տօնակատարութիւններու մասին եւ շեշտեց բնութեան առաւել եւս կարեւորութիւն ընծայելու անհրաժեշտութիւնը: «Հայոց մօտ տարեմուտ ընդունուած Նաւասարդը նաեւ կը յիշեցնէ բնութեան գեղեցկութիւնները» շեշտեց Պատրիարք Հայրը եւ այս արումով յայտնեց որ մենք ալ ըլլալով բնութեան ամենէն կարեւոր տարրերը՝ պէտք է հաշտուինք բնութեան իրականութեանց հետ ու փորձենք մենք զմեզ նորոգել ապաւինելով բնութեան խսկ տուիչին՝ Աստուծոյ:

Պատրիարք հայրն անդրադարձաւ նաեւ Երիտասարդութեան եւ Մարմնամարզութեան Նախարարութեան ներդրումին եւ

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ 5-ամեակի կարկանդակի հատումը:

Երեկոն աւարտեցաւ հանդիսավար Ստեփան Յովակիմեանի խանդավառ ելոյթով:

2023-2024 Տարեշրջանի Կրթանպաստներ ստացան.

Ամերիկայէն՝
Սառա Աբրահամեան
Սոֆիա Գէորգեան
Անի Հէքիմեան
Քէթրին Սարգիսեան
Արէն Աւետիսեան
Անի Մկրտչեան
Ճոզեֆ Դերցակեան-Հէրիս

Հայաստանէն՝
Յակոբ Ճորճ
Աննա Ղարիպեան
Նուարդ Իզմիրլեան
Նանէ Պետրոսեան
Լիբանանէն՝
Ծովիկ Գէոշկէրեան
Տալիտա Շարպարաշեան
Նուշիկ Զատիկեան

Գիւմրիում Բացուեց Ճափոնացի Արուեստագէտ

Շարունակուած էջ 12 -էն

ծագործութիւնները կապում են համագործակցութիւնը եւ կատարողականութիւնը տիեզերքի ընդհանուր գիտելիքների հետ, եւ ոչ ոք չի կարող բացատրել, թէ ինչու: Նոյնիսկ ինքս... »,-ասում է հեղինակը:

Այումի Ադաչին ծնուել է Ճափոնի Հիոգօ քաղաքում 1972 թուականին, սովորել է Օսակայում արուեստի համալսարանում, Ճափոն: 1996 թուականից ապրում եւ ստեղծագործում է Հոնքոնկում: Այումին աշխատում է բազմագիտակարգային մեդիաներով՝ հիմնականում նկարչութեամբ եւ ինստալացիաներով: Այումին անհատական եւ խմբային ցուցահանդէսներ է ունեցել Հիոգոյում, Օսակայում, Թոքիոյում, Կանագավայում, Կիոտոյում, Նիիգատայում, Գունմայում, Շանհայում, Հոնքոնկում, Մակաոյում, Թայուանում, Վիեթնամում, Ֆրանսայում, Հնդկաստանում, Պուլկարիայում, Փորթուկալում եւ Գերմանիայում 1992 թուականէն ի վեր:

«Մանչըսթըր Սիթին» Յաղթեց «Շեֆիլտ Եունայթըտին»

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան երրորդ հանդրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթին» հիւրընկալեց «Շեֆիլտ Եունայթըտին»: Գաթալոնացի Խոսեպ Կուարտիոլայի գլխաւորած խումբը յաղթեց 2:1 արդիւնքով:

«Մանչըսթըր Սիթիի» յաղթական կոլը 88-րդ վայրկեանին նշանակեց սպանացի կիսապաշտպան Ռոտրին:

«Մանչըսթըր Սիթին» 9 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: «Ուեսթ Հեմը», «Թոթենհեմը» եւ «Արսենալը» 7-ական կէտով 2-4-րդ տեղերը կը գրաւեն:

«Աստոն Վիլան» հիւրընկալուելով 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Պըրնլիին» եւ 6 կէտով 6-րդ տեղը կը գրաւէ:

«Լիվերփուլ» Յաղթեց «Նիւքասլին»

Անգլիոյ առաջնութեան երրորդ հանդրուանին «Լիվերփուլը» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Նիւքասլ Եունայթըտի» հետ: Գերմանացի Եուրգէն Կլոպի գլխաւորած խումբը յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով, թէեւ 28-րդ վայրկեանէն սկսեալ կը խաղար 10 ֆութպոլիստներով: Հեռացուած էր հոլանտացի պաշտպան Վիրճիլ Վան Տայքը:

«Լիվերփուլը» 7 կէտով չորրորդն է, «Նիւքասլը» 13-րդն է՝ 3 կէտ:

«Արսենալը» Կորսնցուց Առիթը, «Մանչըսթըր Եունայթըտ»Յաղթական

Անգլիոյի Փրեմիեր Լիկայի առաջնութեան երկրորդ հանդրուանին փոխախոյեան «Արսենալը» լոնտոնեան տերպիի ընթացքին մրցեցաւ «Ֆուլհեմի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 2:2:

«Ֆուլհեմը» վերջին վայրկեաններուն կարողացաւ երկրորդ կոլը նշանակել եւ խուսափիլ պարտութենէ:

«Մանչըսթըր Եունայթըտ» «Օլտ Թրաֆորտի» իր դաշտին վրայ 3:2 արդիւնքով յաղթեց «Նոթինկհեմ Ֆորեսթին»

«Մանչըսթըր Եունայթըտ» 6 կէտով 5-րդն է: «Նոթինկհամ Ֆորեսթը» 14-րդն է՝ 3 կէտ:

Հէրի Քեյնի Երկու Կոլերը Նպաստեց «Պայրըն Միւնիխի» Յաղթանակին



Գերմանիոյ առաջնութեան երկրորդ հանդրուանին ախոյեան «Պայրըն Միւնիխ» իր դաշտին վրայ ընդունեց «Աուկսպուրկին»:

Գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

«Պայրըն Միւնիխ» 6 կէտով երկրորդն է: 6-ական կէտ ունին նաեւ «Ունիոն Պեռլինը», «Պայերը», «Վոլֆսպուրկը» եւ «Ֆրայպուրկը»:

«Պարսելոնան» Պարտութեան Մատնեց «Վիլիառեալին»՝ 4:3

Սպանիոյ առաջնութեան երրորդ հանդրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Վիլիառեալին» եւ յաղթեց 4:3 արդիւնքով:

Սպանացի Զաւիի գլխաւորած խումբէն աչքի ինկան սպանացի կիսապաշտպան Գաւին, հոլանտացի կիսապաշտպան Ֆրքնկի Տէ Եոնկը, սպանացի յարձակող Ֆերան Թորեսը եւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին:

«Պարսելոնան» 7 կէտով երկրորդն է եւ 2 կէտ ետ է առաջատար «Ռեալէն»:

«Ռեալին» Յաղթանակ Ապահովեց Պելինկեմի Կոլը

Սպանիոյի առաջնութեան երրորդ հանդրուանին փոխախոյեան «Ռեալը» Վիկոյի մէջ հիւրընկալեց «Սելտային» եւ յաղթեց նուազագոյն արդիւնքով

Խաղի միակ կոլը նշանակեց անգլիացի կիսապաշտպան Ճուտ Պելինգեմ:

Արքայական ակումբը երեք յաղթանակէ յետոյ 9 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

Աթլեթիքի ԱԱ. ԱՄՆ-ի Հաւաքականը Մետալներու Թիւով Առաջին Տեղը

Հունկարիայի մայրաքաղաք Պուտապեշտի մէջ աւարտեցաւ աթլեթիքի աշխարհի առաջնութիւնը: Մետալային հաշուարկի մէջ առաջին տեղը գրաւեց ԱՄՆ-ի խումբը, որ նուաճեց 12 ոսկի, 8 արծաթ, 9 պրոնզ մետալ:

1. *ԱՄՆ՝ 29 մետալ (12 ոսկի, 8 արծաթ, 9 պրոնզ)*
2. *Գանատա՝ 6 մետալ (4 ոսկի, 2 արծաթ)*
3. *Սպանիա՝ 5 մետալ (4 ոսկի, 1 արծաթ)*
4. *Ճամայքա՝ 12 մետալ (3 ոսկի, 5 արծաթ, 4 պրոնզ)*
5. *Քենիա՝ 10 մետալ (3 ոսկի, 3 արծաթ, 4 պրոնզ)*
6. *Եթովպիա՝ 9 մետալ (2 ոսկի, 4 արծաթ, 3 պրոնզ)*
7. *Մեծ Բրիտանիա՝ 10 մետալ (2 ոսկի, 3 արծաթ, 5 պրոնզ)*
8. *Հոլանտա՝ 5 մետալ (2 ոսկի, 1 արծաթ, 2 պրոնզ)*
9. *Նորվեկիա՝ 4 մետալ (2 ոսկի, 1 արծաթ, 1 պրոնզ)*
10. *Շուէտ՝ 3 մետալ (2 ոսկի, 1 արծաթ)*

Մեսին Նորամուտը ՄԼՍ-ի Մէջ Նշեց Կոլով

ՄԼՍ-ի մրցաշարին «Ինթեր Մայամին» 2:0 արդիւնքով առաւելութեան հասաւ «Նիւ Եորք Ռեդ Պուլզի» նկատմամբ:

ՄԼՍ-ի մէջ նորամուտը կոլով նշեց «Ինթեր Մայամիի» արժենթինցի յարձակող Լիոնել Մեսին, որ պահեստայիններու կազմին մէջ էր եւ դաշտ մտաւ 60-րդ վայրկեանին, երբ արդիւնքը 1:0 էր: Մեսին խաղի հաշիւը կրկնապատեց 89-րդ վայրկեանին:

ՄԼՍ-ի նախորդ 11 հանդիպումներուն «Ինթեր Մայամին» յաղթանակ չուներ եւ 21 կէտով Արեւելեան Քոնֆերանսի աղիւսակին վրայ կը գրաւէր նախավերջին տեղը:

Մփապէն Կը Մնայ ՊՍԺ-ի Խումբին Հետ

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի իտալացի դարպասապահ Ջանլուիճի Տոնարումման վստահ է, որ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն չի հեռանար փարիզեան խումբէն:

Ֆրանսայի առաջնութեան երրորդ հանդրուանին 24-ամեայ ֆութպոլիստը դարձած էր տուպլի հեղինակ, ՊՍԺ-ն 3:1 արդիւնքով յաղթած էր «Լանսին»:

«Մեծագոյն հաճոյք է Կիլիանի հետ խաղալը: Ան հոյակապ խաղցող է: Իհարկէ, ան կը մնայ ՊՍԺ»ի:

Ֆրանսայի առաջնութեան Մփապէն ՊՍԺ-ի հետ նշանակած է 150 կոլ:

Մոհամետ Սալահը Ընդունած է «Ալ Իթիհատի» Առաջարկը

Անգլիական «Լիվերփուլի» 31-ամեայ եգիպտացի յարձակող Մոհամեթ Սալահը ընդունած է Սէուտեան Արաբիոյ ախոյեան «Ալ Իթիհատի» առաջարկը: «Լիվերփուլի» ղեկավարութիւնը դեռ չէ պատասխանած առաջարկին: Տեղափոխման գումարը կրնայ կազմել 90 միլիոն եւրո, ինչը որ կը դառնայ ամենաթանկը Սէուտեան Արանիոյ առաջնութեան պատմութեան մէջ: Ֆութպոլիստի աշխատավարձը կ՝լլայ տարեկան 76 միլիոն եւրո:

Մոհամեթ Սալահի պայմանագիրը «Լիվերփուլի» հետ նախատեսուած է մինչեւ 2025թ. Յունիս: Ան 2017 թուականէն ի վեր հանդէս կու գայ գերմանացի Եուրգեն Կլոպի գլխաւորած խումբէն, որուն հետ դարձած է Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, սուփերգաւաթակիր, Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր, Եւրոպայի սուփերգաւաթակիր, աշխարհի ակումբային ախոյեան:

Այս ամրան «Ալ Իթիհատ» տեղափոխուած են ֆրանսացիներ Քարիմ Բենզեման ու Նկոլօ Գանթեն եւ պրազիլացի Ֆապինիոն:

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ
ARMENIAN INDEPENDENCE DAY Festival
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ
ՓԱՌԱՏՕՆ
SUNDAY, SEPTEMBER 17, 2023
STARTING AT 11:00AM
VERDUGO PARK / GLENDALE
1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208
ORGANIZED BY
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
GENERAL SPONSOR
SAHARA
MIDDLE EASTERN CUISINE
2226 E. Colorado Blvd.
Pasadena, CA 91107
626.795.6900
www.saharapasadena.com
GLENDALE GALLERIA
SPONSORS
State Senator Anthony J. Portantino
LILIT BAKERY CAFE
Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles
Vrej Pastry
UMPQUA BANK
LIVE MUSIC
ARMENIAN FOOD
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
KIDS GAMES
ART EXHIBITION
To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցէք՝ Նոր Սերունդ Միութիւն
(818) 391-7938